درعلیه‌ده غلطه‌ده (آره‌ولق) غزته‌سی اداره‌خانه‌سنه

ՊՈԼԻՍ Ղալաթիա, Նորատունկեան Խան

Les annonces sont reçues
à la Direction du Journal "AREVELK"
Galata, CONSTANTINOPLE.

Նամակ կամ որ և է զրուցիւն պէտք է ուղղել
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԹԵՐԹ
Ազգային, Գրական և Քաղաքական

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ և գաւառներու համար տարեկան 140 ղր.
" " վեցամսեայ 70 "
" " եռամսեայ 40 "
Օտար երկիրներու համար տարեկան 40 Ֆրք.
" " վեցամսեայ 20 "
Ռուսիոյ փոխարէն փոքրիկ փոխ կ'ընդունուի, 115 դահեկան փոխ 100 դրամի հաշուով։
Յետգրեալ բաժանորդագրութիւնը բաժանորդագրութեան կը վճարուի։

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել ուղղակի Խմբագրատան։

ԱՋՈՒ ՁԱԽ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՄԸ

Անցեալ շաբթու, Կրօնական Ժողովոյ մէկ որոշման վրայ, Պատրիարքարանը Թաղական Խորհուրդներուն և գաւառական Հոգաբարձութեանց ցրուեց կարեւոր շրջաբերական մը՝ որուն նկատմամբ կ'արժէ քիչ մը ծանրանալ, որովհետև այդ շրջաբերականը հիմնուած է շատ առողջ, բանաւոր և ամէն կերպով պատուաբեր մտածման մը վրայ։

Արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ այդ մտածման բովանդակ պատիւը կը պատկանի Ուսումն. Խորհուրդին, քանի որ ինք առաջին ան եղաւ խնդիր ընել շրջաբերականին դիտել տուած անպատեհութիւնը, և ինք ամէնէն առաջ ձեռնարկեց արմատախիլ ընել զայն, միանգամ ընդ միշտ վերջ տալու համար անտեղի սովորութեան մը՝ որ շատ վնասակար կը դառնար խեղճ դպրոցական տղոց։

Այդ սովորութիւնը չեմ կարծեր որ պէտք ունենամ երկարօրէն նկարագրելու, քանի որ ներկայացուցած տգեղ երեւոյթը ամէն թերթի մէջ։ Բաւական միայն երկու խօսքով.—Ասկէ առաջ, ո՛ և է անձի մը յուղարկաւորութեան մէջերն, այս ու այն վարժարանէն աշակերտներ,—ընդհանրապէս ձեռնտուր՝ թաղին եկեղեցւոյն մէջ—յուղարկաւորութեան թափօրներու կ'ընկերանային իբր ժամկոչ, իբր խաչ բռնող և կամ իբր ձեռնտուր։ Թաղ. Խորհուրդները փոխանակ արգիլելու ըլլալու, ընդհակառակը կերպով մը քաջալերողներ կ'ըլլային այդ անտեղի սովորութեան, և՛ առիթ ալ տալով ու դիւրութիւններ պատճառաւ որ այդ մասնակցիլը բաւականին շահաբեր կ'ըլլար իրենց։

Ասկէ բնականաբար ծնունդ կ'առնէին շատ մը անպատեհութիւններ և անկանոնութիւններ, որոնցմէ մի միայն երկուքը կը յիշատակէ Պատրիարքական շրջաբերականը. նախ այն՝ թէ այդ պատճառաւ աշակերտները իրենց դասերէն կը զրկուին, և յետոյ՝ թէ դպրոցներու կարգապահութիւնը կը խանգարուի։ Այս երկուքը շատ լաւ դիտուած են, ըսելիք չունիմ. բայց պէտք է նկատել որ ասոնցմէ շա՛տ աւելի էական, շատ աւելի գէշ անպատեհութեան մը ծնունդ կրնար տալ այդ սովորութեան կիրառումը։ Յուղարկաւորութեան թափօրներու անհրաժեշտ կարասիները կազմելով, տղաքը իրենց դասերէն աւելի բան մը կը կորսնցնէին, իրենց հոգւոյն առողջութիւնը, զուարթութիւնը։ Անանկ կեանքի մը մէջ՝ ուր կեանքին արեւոտ, ծաղկոտ կողմերը միայն պէտք է պարզել տղուն, երբոր զայն տանինք կեալ յուղարկաւորութեան թափօրներու, երբոր զայն ենթարկենք մահուան արարողութեանց բովանդակ ջլատիչ, յուսահատեցնող ազդեցութեան, բնականաբար իր հոգին անեղծ չի մնար։ Դիտած եմ շատ անգամ որ յուղարկաւորութենէ վերադարձող տղաքը մելամաղձոտ, մռայլ կը մնան բաւական օրեր. և տեսած եմ թէ առանց բացառութեան, աշակերտներու սև—ճերմակ հագուստը, մեռելական մեղեդիներու աղաղակ, ծանր շունչը, եկեղեցւոյն ստուերոտ խորհրդաւոր երեւոյթը և տակաւին ուրիշ շատ մը բաներ կը ճնշեն անոնց հոգին։

Գլխաւորաբար այս պատճառաւ է որ Պատրիարքարանի կողմէ տրուած շրջաբերականը այնչափ առողջ ու բարերար հանգամանքով մը կը ներկայանայ մեզի։

* * *

Միայն թէ, ըսեմ անմիջապէս, այդ շրջաբերականը այդպէս ցրուելը չի բաւեր։ միայն։ Պէտք է հսկել անոր գործադրութեան վրայ, և հսկել շա՛տ անաչառութեամբ, շա՛տ խստութեամբ։ Իմ մասս, կը կարծեմ որ քիչ մը դժուար պիտի ըլլայ այդ սովորութիւնը մէկէն հարուածով մը արմատախիլ ընել։ Եւ ասիկա՛ անոր համար որ շատոնց եկեղեցական մէջ, ուրկէ չուզեն շատ մը Թաղ. Խորհուրդներ և ձեռնտու տղաք հրաժարիլ, և յետոյ, չեն պակսիր անանկ ծնողքներ ալ ու աւելի ընդհանրապէս, որոնք իրե՛նք իրենց զաւակները այդ տեսակ անպատեհութեան մը կ'ենթարկեն՝ առանց զգալու անոր առաջ գալիք վնասը։ Անոնք տեսակ մը փառասիրութիւն կը զգան, երբ իրենց զաւակները ո՛ և է կերպով մը մասնակից կը տեսնեն այդ օրինակ արարողութեանց, որ չտեսնուած մըն ալ է իրենց զաւակաց համար և այդ փառասիրութեան զգացումը ուրիշ ամէն մտածում կը խեղդէ իրենց մէջ, թող որ շատերը բոլորովին անկարող են մտածելու թէ ո՛րքան կրնայ իրենց զաւակին համար վնաս մը առաջ գալ։

Ասոնք նկատի առնելով, դժուար չէ գուշակել թէ Թաղականներ պիտի ըլլան այդ շրջաբերականին գործադրութեան մէջ, Թաղականներ՝ որոնք տակաւին անկատ հակառակութեան մը կրնան առաջքը առնել, առանց մեծ դժուարութեան մը բախելու։

Եւ հարկ կա՞յ ըսելու թէ այդ հսկողութիւնը պէտք է ըլլայ անողոքաբար, քանի որ խնդիրը այն տարիներ կարեւոր է ինքնին։ Մեր մէջ, ուշքի զարնող թերութիւն մը կայ՝ որուն վրայ կը յամառինք մնալ։ Այդ կարգի ո՛ և է որոշում մը արդիւնքէն առաջ անգամ մըն ալ հաստատուի չենք ըներ թէ այդ որոշումը կը գործադրուի՞, թէ թերացումներ չե՞ն ըլլար։ Ո՞ւր հոգ տարեր։ Անգամ մը որոշումը տուած են, և այդ իսկ մեծ բան մըն է արդէն։ Այդ տրամաբանութեան պատճառաւ է որ զոր օրինակ մեր վարժարաններուն մէջ տասնը վկայականի ուսուցիչներ չեն պակսիր, այդ տրամաբանութեան պատճառաւ է որ մեր վարժարանները միշտ հակառողջապահիկ պայմաններու մէջ կը մնան, այդ տրամաբանութեան պատճառաւ է որ ազգ. կալուածներ չեն արձանագրուիր, ու վերջապէս—մի՛ միայն ասոնք յիշելու համար,—միշտ այդ տրամաբանութեան պատճառաւ է որ քահանաները հազար ու մէկ զեղծումներ կը գործեն։ Եւ տակաւին, ասոնց մասին ո՛չ թէ միայն մէկ, այլ երբեմն քանի մը տասնեակ որոշումներ տրուած են յաջորդաբար։ Որոշում մը տրուած է, չէ՛ գործադրուած, մինչև որ աչքառու անպատեհութիւն մը ծագելով պէտք տեսնուած է երկրորդ որոշում մը տալու։ Ան ալ քիչ մը ատեն ետքը չէ գործադրուած, հետեւած է երրորդ որոշում մը, անոր ալ չորրորդ մը, և այլն։ Եթէ երբեք այդ որոշումներէն մի՛ միայն մէկ հատին արդիւնէն վերջ հսկողութիւն մը կատարուելու ըլլար, աւելորդ է ըսել որ երկրորդ մըն ալ տալու բնաւ պէտք չէր մնար։

Տեսնենք այս անգամ ինչպէս պիտի ըլլայ։

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ ՄԱՀԸ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Փետրուար 21ին առաւօտեան 7 ժամին, ինչպէս հաղորդում են Կովկասի թերթերը, խաղաղ վախճանուեց Ալեքսանդր Երիցեանը, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ (սրտի որոսը, թոքերի քրոնիքական բորբոքում)։ Հանգուցեալը ծնվել է Թիֆլիսում 1841 ի Նոյեմբերի 4 ին։ Նրա ծնողները Սանահին գիւղից էին։ Ութ տարեկան հասակում նա մտնում է Ներսիսեան դպրոցը, որտեղ մի քանի ամիս միայն մնալուց յետոյ՝ տեղափոխւում է Երեգմանեանի պանսիոնը. այստեղ դասաւանդվելով՝ մտնում է գիմնազիա և ուսումը կիսատ թողնելով՝ ստիպված է լինում դուրս գալ վեցերորդ դասարանից՝ բրոնխիտ հիւանդութեան պատճառով։

Կեանքի ասպարէզ մտնելով՝ Ալեքսանդր Երիցեանը ընտրում է սկզբում պետական ծառայութիւնը, միաժամանակ պարապելով գրականութեամբ։ Նա մօտ 5 տարի պաշտօն է վարում կազյոննայա պալատում, այնուհետեւ անցնում է նահանգական կառավարութեան գրասենեակը։ Յետոյ պաշտօն է վարում Հնագիտական Յանձնաժողովի մէջ, այն ժամանակ, երբ Բերժէի գլխաւոր ղեկավարութեամբ սկսվեցին հրատարակվել այդ Յանձնաժողովի յայտնի ակտերը։ Այս պաշտօնը վճռական ազդեցութիւն ունեցաւ հանգուցեալի ապագայ գրական գործունէութեան վրա՝ որոշ մասնագիտական ուղղութիւն տալով նրան. բայց այստեղ էլ նա չգտաւ հետաքրքրութիւն սաստիկ, որի պատճառով ստիպված եղաւ թողնել այդ պաշտօնը։ Ռուսական Թագաւորական Ընկերութեան պետական կալուածների մինիստրութեան մէջ պաշտօն էր վարում և այս պաշտօնում մասնակցեց Տեխնիկի ծրագրած՝ Անդրկովկասի պետական գիւղերի ստորագրութեան ընդարձակ գործում, հետազօտելով Ղ. գաւառը։

1886 թուականից նա թողնում է ո և է պաշտօն վարել և ամբողջապէս նուիրվում է գրականութեան։ Թիֆլիսում 1881 թ ին գումարված Հնագիտական 5 րդ Ժողովին մասնակցում յաջողապէս։ Ցոյց է տալիս, որ 1878 թուին հնագիտութեան դասախօսութիւններ է կարդացել Ներսիսեան դպրոցում։

Ասա՛ց, նկատում է մի ծանօթ դէմք էլ։ Ծանօթ ասացինք, բայց սա չէ նշանակում սովորական, առօրեայ։ Երիցեանը բաւական ինքնուրոյն դէմք մըն էր, և ինչպէս յայտնի է հանդէս եկաւ բոլոր մտայնութիւն էլ ունենար, որոշ աշխարհայեացքի, որոշ կարծիքների և ուղղութեան տէր մի էակ է։ Երիցեանը շատ անգամ ճիշտ ու որոշ կերպով ցոյց տուել է իր հայեացքները։

Անշքական նեղ ու զգայուն փողոցի վրա, երկար դէմքի Կուր գետը գործած, մի փոքրիկ տուն կայ։ Դա Ալեքսանդր Երիցեանի սեփականութիւնն է, միակ անշարժ սեփականութիւնը։ Մօտենալով տան դրսի դռներին, մի բան ուղիղ ձեր ճակատին ասում է, թէ դուք հնագէտի և հնասէրի տուն էք մտնում։ Վաղուց, շատ վաղուց են մեր դռների վրայից անհետացել նահապետական մեծ երկաթէ «թակերը», նոյն իսկ մեր գաւառական խուլ անկիւններում էլ զանգակը փոխարինել է այդ հին կոչնակը։ Երիցեանի դռների վրա մնացել է այդ հնութիւնը. մինչեւ որ չը ծեծէք այդ դուռը, թնդացնելով լուռ փողոցի մէջ երկաթի ձայնը, ձեզ ներս չեն թողնի։

Տան վերին յարկում մի հասարակ զարդարանքից զուրկ սենեակ էք մտնում։ Ինքը Երիցեանը, սաստիկ կը նեղանար եթէ այսօր լսէր այդ խօսքերը։ Նա այդ սենեակի զարդարանքները չէր փոխի աշխարհի հարստութիւնների հետ։

Ի՞նչ զարդարանքներ էին դրանք։ Պատերի վրա շինված են հասարակ բաց պահարաններ, ուր դարսված են գրքեր, թղթեր։ Մի ամբողջ աշխարհ է դա. կազմված հին, փոշոտ, դեղնած թղթերից, հին գրքերից կամ հնութեան մասին խօսող գրքերից։ Մօտեցէք այդ կոյտերին. շատ գրքեր, թղթեր միայն առաջին անգամ ձեզ թոյլ չէ տալիս հետաքրքրվելու, թէ ինչ են դրանք. կան վերնագրեր, որոնք ձեզ հեղինակութիւն են պատճառում. և դուք ասում էք, թէ այս մարդը ունեցել է մի մոլութիւն է ունեցել գրքեր այստեղ բերելու ամէն մի բան, որ հին է . . .

Այս մարդը... Նայեցէք այժմ նրան։ Մի կարճահասակ ծերունի, ակնոցները դրած, նստած է իր այդ կոյտերի մէջ։ Նայում է, թերթում է, նկատողութիւններ է անում։ Հարկաւոր էլ չէ, որ դուք խօսեցնէք նրան։ Նա ինքը կը սկսէ խօսել իր հարստութիւններից. խօսում է մի վառվռուն ոգևորութեամբ, խօսում է այնպիսի չափով, այնպիսի վառ հետաքրքրութեամբ, որ դուք չէք կարող ուշադիր չը լինել։ Դուք տեսնում էք, որ ձեզ հետ խօսում են հին, դարաւոր, ժամանակի թղթերը։

Մ՛, չը կարծէք թէ հեշտ է նա ձեռք բերել այդ հնութիւնը։ Տարիներ, երկար տարիներ լաւագոյն կարգ-կարգ թղթերի վրա, հաւաքել այդ կտորները գիւղէ-գիւղ, շուկայից շուկա, գնելով պատմական մեծ մեջլիսներ, շատ ու շատ կարելով ընտանիքի հնութիւն, այդ նոյնի այդ թղթերին, կորստից փրկել կենսագրական տեղեկութիւններ բերել, դասաւորել։

Դա մի եզակի կարգի աշխատութիւն է, ի՞նչ կ'ասէք։ Այդ սենեակում գտնւում է [illegible] Թէքէի [illegible] քաղաքի կոյտերը իրանք իրանց չեն եկել ու բազմել այս դարակներում. նրանց հաւաքել է սէրը, անձնուէր, փառասիրական սէրը, որ երբեք յոգնածութիւն, հիասթափութիւն չէ զգում, պատմութեան ակամա քաղցրութեան է փոխում։ Երիցեանը մի զարմանալի աշխատասէր էր։ Նոյն իսկ մահւան անկողնում նա չէր մոռանում իր սիրելի աշխատութիւնը։ Հնագիտութեան մի արտասովոր բանասէր—ահա ինչ էր Երիցեանը։ Նա հաւաքել էր, ամփոփել է մեծ խնամքով համբերատարութեամբ, յամառ տոկունութեամբ։ Եւ նրա այդ գրական գործունէութեան արդիւնքն է այն հարուստ հնագիտական ժողովածուն, որ նրա ամբողջ հարստութիւնն, նրա ամբողջ պարծանքն է կազմում։

Իր այդ ատաղձներից նա անդադար դուրս էր բերում նիւթեր, ուսումնասիրութիւններ։ Դեռ գիմնազիայի աշակերտ էր նա, երբ սկսեց գրել մի թերթի մէջ։ Գրել է նա մանր ու մեծ յօդուածներ, գրքեր համարեա անվերջ չափ։ Աչքի է ընկնում մարդու այդ աշխատասիրութիւնը։ Կարելի է այս կամ այն կերպ վերաբերվել Երիցեանի գրուածքներին, բայց նոյն իսկ շատ դժգոհութիւններ գտնող էլ չէ կարող մի խօսքով հերքել չըլինել այդ ջանասէր անդուլ աշխատութիւնը։

Երիցեան առաջին աշխատութիւնն էր ուսումնասիրում, այսինքն հաւաք նիւթերը, որոնց շատ անգամ քաղում էր թղթերի գանձարան պատառիկներից։ Բնական էր, որ նա հասարակաչափ կարեւոր ու թանկագին համարէր ամէն մի փաստ, որքան էլ նա աննշան լինէր։ Այդ բանը երեւում է և նրա աշխատութիւնների մէջ։ Այսպէս, գրելով Ներսիսեան դպրոցի պատմութիւնը, Երիցեանը կարեւոր է համարել դնել նրա մէջ և Ներսիսեան ամենօրեայ մանր մունր ծախսերի ցուցակը։ Պատմութիւն, Երիցեանը, ինչպէս, չէր գրում. նա չէր մշակում նիւթերը, չէր ամբողջացնում պատմութիւնը քննական հայեացքով։ Բայց նա տալիս էր նիւթեր պատմութեան համար։

Այժմ դառնանք էլի հնագէտի սենեակին։ Եթէ չը լինէր Երիցեանը, ո՞ւր պիտի մնային նրա հաւաքած թղթերն ու գրութիւնները։ Պէտք է, ի հարկէ, կորչէին, ոչնչանային դարաւոր թուել ու անյայտ անկիւններում։ Երիցեանը, մի անձամբ, կարողացաւ հրաշալի հաւաքել դոկումենտները։ Ուրեմն նա կենդանի էր, մենք կարող էինք ապահով լինել, որ այդ հարստութիւնը ո՛չ միայն չի կորչի, այլ կ'աւելնայ, ոչ թէ չի փակվի կողպէքների տակ, այլ մատչելի կը լինի ամէն մի հետաքրքրվողին։

Այժմ Երիցեանը չկայ։ Վախճանած, յոգնած ամենօրեայ դառն աշխատանքներից, նա այսօր գնում է իր յաւիտենական հանգստի տեղը։ Բայց թողնում է իր գեղեցիկ գործը, այսպիսի վառ սիրով հաւաքած ու պահպանած իր ժողովածուն։

ԶԻԿԶԱԿ ՆՕԹԵՐ

ՇԱԲԹՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Բարեկամներս, սիրելի ընթերցողներս և ազնիւ ընթերցուհիներս,—գրագիտական վերջին նորաձեւութեան համեմատ,—մէկ չէր այս շաբթու Վասփորի մէջ —ես Վասփոր կը բնակիմ —ու Պոլիս իջնելով կրցայ շաբթուան թերթերը ամէնքն ալ անթերի սատել,—ինչո՛ւ լրագրավաճառս Փուեջ անգամ կը բերէ ինծի.—ուր աչք մը պիտի պտտցնեմ սա վայրկեանիս, անգամ մըն ալ, արագօրէն փափաքի մը մղուած, որովհետեւ անոնց մէջ ո՛րչափ բան կայ, ո՛րչափ բան, այս շաբթու։

Ու շաբթուան ամէնէն ծոյլէն սկսելու համար, խոր պզտիկութիւն մը խոստովանիմ ձեզի, սիրելի ընթերցողներս և ազնիւ ընթերցուհիներս, չէք գիտեր ո՛րչափ անյաղթ եմ ես, ո՛րչափ։ Ես, մինչեւ հիմա կը կարծէի որ, բաւական հմտութիւն ունիմ երաժշտական արուեստին մէջ, բայց աւա՜ղ, կը սխալիմ եղեր, որովհետեւ, գրական այս շաբա՛թը ինծի սորվեցուց.—ո՛վ բարեբաստ շաբաթ,—մանրանկար գրագիտուհի մը նորավէպը,—թէ կ'ուզէիք աղբիւրը—թէ Շոբէնհաուէր, երաժշտութեան compositeur ալ է եղեր, այո՛, Շոբէնհաուէրը զոր մենք մինչեւ հիմա իբր աղջամղջաւէր փիլիսոփան ճանչցած էինք։—Ու նաեւ Շոբէնհաուէրին կտոր մը զարկաւ։ Սորվեցա՞ք Շոբէնհաուէրին։

Շոբէնի վրայ nocturne մը պակաս կամ աւել, մեծ բան մը չէ՛ ձեզի համար աղաղակող, անանկ չէ՞, սիրելի ընթերցողներս և ազնիւ ընթերցուհիներս, քանի որ առանց գրաչարի քմահաճոյքներ են, որոնք կը գործուին թերթերու մէջ, թերթիկ մը պակաս երթալու համար գրաշարականին, ինչպէս օրինակի համար Նարեկ չարող գրաչար մը, մտածելով թէ emule-ն ի՞նչ պիտի ըլլայ, երեք գիրով մ'է մը կը շինէ կրնայ Նարեկին ապուշ թարգմանութիւնը այծի այդ խմելու մայիսներով լեցնել, բառ գլուխ ալ,—Եւ աւելի ձեռքի տակ ըլլալուն փոխարէն,—անգլիա Ճ մը բերել անկելով ամէն նախադասութեան ծայրը—եթէ սակայն ասոնք, խմբագրական անհակասութիւններ չեն, որոնք բանի ծառանգուած կրնան ըլլալ անհասկնալի խանգարմունքներ։

Զոս գիտեր ինչո՛ւ, մէկէն ի մէկ Նարեկացիին այս գիրքը դէմս ելաւ, դէպի Բերա ուսուցիչներու կիրակնօրեայ դասախօսութիւնները մտիկ ընելու գացած ժամանակս, կամ, գիրերու շրջադարձութեան մը, կիրակնօրեայ դասախօսութիւններու վրայ դասախօսութիւն մը արտասանելու պահուն, որ սակայն չըլլար անդրադառնալէ մղուած դասախօսութեան մը շարունակութիւնը, որուն նախորդը կրնայ մեր մտածկոտ վարժապետներուն և նաեւ—ինչո՛ւ այսքան կենդանի եմ անոնց—վարժուհիներուն մտքին եկած ըլլալ։ Եթէ վստահ ըլլայի թէ անոնց վիպական tonով տեսութիւն մը չափի նմանին երեսուն պիտի ըսէի որ չմեղադրէ զիրենք, երբ անոնց կիրակի մինչեւ հեռաւոր անկիւններէն, ելեր դասախօսութեան էին վազեր, թարմին ջուրը մտած տխուր ձախողանքով մը, որովհետեւ կը մտածեմ թէ, ինչո՛ւ չեն բարեհաճիր անոնք օր-թերթ մը աւելի անցընելու, ուր կարենան կարդալ Ուսումնական Խորհուրդին վերջնագոյն հեռագիրները, կամ դասախօս դասատուներուն վերջնագոյն արդարութիւնները, քանի որ ամէն նոր վայրկեան նոր քմահաճոյք մը կրնայ բերել իր հետ։ Համոզւած չեմ ես այն չարամիտներուն, որոնք կ'ուզեն միջամտել խորհրդաւոր Խորհուրդներու կարգադրութիւններուն։ Անոնք գիտեն նայիլ վարժուհիներուն մինչեւ Բերա յաջնիլը ընտրել, երկու մեծագոյն չարիքներու մէջէն։

Թռչուն ըլլալու բանաստեղծական թռիչքէս որչափ ալ որ տխրած չըլլամ, Բերայէն Պրուսա թռելու համար աչքիթերթի մը մէջ, նորէն պիտի փորձեմ սրբազնական աչքին մօտիկնալ ծերունիներու քաղաքին Առաջնորդին, որ իր հոն գրադարանին գիտը յայտնելէն ետքը, ինչո՛ւ, չեմ հասկնար, այսչափ կը գրգռէ հասարակութիւնը իր անդամներով, որոնց համար ի՛նչ ալ որ ալ ըսուած ըլլան, նորէն չեն կրնար կայլ մը ունենալ իր պաշտօնէ հրաժարման ու Կեսնոց Փայլի դրդուած քարին խնդիրներուն հետ։ Սակայն ո՛վ է ան որ չի կրնար կոր մեկնել Սերոբեանին հրաժարման պատճառները։ Չորմակի քաղաքէն սրամիտ վաճառականներ կը հաւատան թէ, Սերոբեանը ձեռք օր մը ծովը շատ կարօտնալով, սրտանց ախ մը քաշեր է Վասփորին վրայ, և ուխտ է ըրեր դառնալ ծոցը տուածին պէս, անոր կապոյտ ալիքներուն բարեւ մը տալու անգամ մը, և լայն կուրծքով զով զեփիւռ մը կլլելու, մանաւանդ իր գրադարանը տեսնելու վերջ ամսուան կարօտէ մը ետքը, երբ,—ժամանակներու դէպքերուն,—Պրուսան ալ, ո՛ւֆ, քիչ մը շատ··· առաջ կ'ըսէ։ Ասիկա չարամիտ մեկնաբանութիւն է Պոլսեցիներուն, որոնք չգիտցան իրենց բաներուն առաջնորդին յարգը։

Ես սակայն, իմ մասիս,—անկրթ՛ն մտածութիւն,—պիտի բաղձայի որ, ան կամ ան պատճառով, Պրուսայի տարաբախտ Առաջնորդը գա՛յ Պոլիս, մտիկ ընել տալու համար մեզի, մէկը իր լեզուական քարոզներէն, մանաւանդ մեծ պահոց օրով։

Ի՞նչ կ'ըսէք այս փափաքիս, միշտ սիրելի ընթերցողներս և ազնիւ ընթերցուհիներս։

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Արուեստագէտներու ներկայացումէ մը ետքը։

—Ա՛հ, տիկին, սքանչելի էիք. կարծես թէ այդ կատարած դերերնիդ ձեզի համար գրուած ըլլար։

—Ո՛հ, ոչ պարոն, վասն զի այս դերին համար սիրուն և երիտասարդ կնոջ մը պէտքը կար։

—Ոչ, տիկին, արդէն հակառակը ապացուցիք։

* * *

Այցելու մը հիւանդ մարդասէրի մը տունը ներկայանալով կ'ըսէ.

—Արդեօք կրնա՞մ պարոնին հետ խօսիլ։

—Պարոնը չի կրնար ընդունիլ, կ'ըսէ ծառան։

—Հոգս չէ չընդունիլը, բաւական է որ տայ, կը պատասխանէ այցելուն։

—)(25)(—

ԹԻՒԼ ՄԱՐԷ

ՌՕԶ-ՄԱՆՕՆԻ ՎՐԷԺԸ

Գ.

ՄԵՌԵԱԼԸ ՎՐԷԺ ԿԸ ԼՈՒԾԷ

Ժիւվարդէն ճառախօսութեամբ մը ելած էր դատաւորին խօսքերուն։ Արդարեւ Վիլլօրիէի գործը դէչ դարձուածք մը կ'առնէր։ Սակայն հետաքրքիր ատեն, Ժիւվարդէն անմեղ կը նկատէր իր պաշտպանեալը։

—Սիրելի բարեկամս, ըսաւ փաստաբանը, երբ հետաքննող չենք խօսիր իրարու հետ, այլ իբր երկու մարդիկ, որոնք զիրար կը յարգեն, հետեւաբար կը խնդրեմ որ ձեր կարծիքը, ինչ որ ալ ըլլայ, առայժմ վերապահէք, մինչեւ որ փորձագէտները իրենց տեղեկագիրը տան Վիլլօրիէի նամակներուն վրայ։ Եթէ այս նամակները կեղծ չճանչցուին, ասիկա անշուշտ մեծապէս պիտի ազդէ պաշտպանելիս մտքին վրայ, որ այն ատեն պիտի ստիպուի խոստովանիլ։ Ընդհակառակը, եթէ հաստատուի որ կեղծարարի մը կողմէ պատրաստուած են ճարտարօրէն, այն ատեն, ձեր միտքն է որ պիտի ողղուի, ինչպէս իմ պաշտպանեալիս անպարտութեանը։ Մինչեւ այն ատեն, կարծիք չպիտի յայտնեմ... Նախաժամանակ է ըսելը։

Դատաւորը սկսաւ ծիծաղիլ։

—Ո՛հ, Կիյոմ, պահ մը խորհեցէք։ Եթէ կ'ուզէք ձեզի հաճոյք պատճառելու համար, ընդունինք որ այդ նամակները կեղծ են...

—Ետա՞յ։

—Տեսա՞ք թէ գիրին նմանութիւնը արդէն կատարեալ է։

—Վիլլօրիէ ալ առարկութիւն կը գտնէ այդ նմանութիւնը։

—Ռօզ Մանօնը կը ճանչնա՞ք։

—Այո՛։

—Կեղծարարի տաղանդ ունենալը գիտէ՞ք։

—Իրաւ է որ խեղճ Ռօզ Մանօն անկարող էր այդ բանը ընելու, ըսաւ փաստաբանը, որովհետեւ կեղծ գիրի հրաշակերտ մըն են այս նամակները։

—Կը տեսնէք որ իրաւունք ունիմ, ըսաւ դատաւորը յաղթական։

—Բայց եթէ Ռօզ ուզած է վրէժխնդիր ըլլալ, և ես չեմ հրաժարիր վրէժխնդրութեան գաղափարէն, որ ամէն բան կը բացատրէ, կրնայ մեղսակից մը ունեցած ըլլալ։ Վրէժխնդիր աղջիկ մը չընկրկիր ո և է խոչընդոտէ առջեւ։

—Ասիկա ալ ուրիշ հարց մըն է, զոր երեւան հանել պիտի ջանանք։

Դատաւորը և փաստաբանը դուրս ելլան միասին և պահ մը պտըտեցան քովը փողոցին երկայնքը։ Իրենց մտքին մէջ ամէն կողմ կը դարձնէին այս դատական գործը։

—Ա՛հ, եթէ կարենայինք երեւան հանել այդ անծանօթ աղջիկը, մինչեւ Ժիւվարդէն։

—Ապահով եղէք, սիրելիս, երեւան պիտի հանենք. Հայր Գրիւլօ և Ֆ. Խոսթիոն հետախուզութիւններ կ'ընեն։

—Անոր վրայ առնուած տեղեկութիւնները շատ աղքատ են։

—Բայց կարգ մը կարեւոր բաներ ունինք մեր տրամադրութեան տակ, ինչպէս իր գիրին մէկ օրինակը։

Ժիւվարդէն չէր ճանչնար Ռէժինին գիրը։ Տեսած էր մանկամարդ աղջկան գիրն այդ նամակը և ո և է կասկած չէր արթնցած մտքին մէջ։

—Ետայ, գիտենք թէ այդ մանկամարդ աղջիկը խարտեաշ, բարձրահասակ և նուրբ է. շարունակեց դատաւորը։ Ո՛վ գիտէ թէ Ժանի կատաղոնը չի ճանչնար զայն։

—Թերեւս։

—Նմանապէս գիտենք թէ Ռօզ-Մանօն և այդ մանկամարդ աղջիկը, ոճրին գործուելէն քանի մը օր առաջ, Վիլլօրիէի բնակարանին մէջ իրարու հանդիպած են։

—Վիլլօրիէ հոն էր։

—Այո՛։ Տակաւ այս ամէնը մութն կ'առնէ։ Ցանկս ասկէ աւելի կենդանի և խորհրդաւոր գործերու քննութիւնը ինծի յանձնուած է։ և ես յաջողած եմ լուսաբանել զանոնք։ Մնաց որ, դժուարութիւնը ո՛լ աւելի կը շահագրգռէ զիս...

Երկու բարեկամները իրարու ձեռքը սեղմելով, բաժնուեցան։

Դ.

ԾԱՂԿԱՁԱՐԴ ԱՂՋԻԿԸ

Ս. Լիւէթէրի փողոցի տան մէջ, ամէն օր հետաքրքրութեամբ կը հետեւէր դատաւորին կողմէ կատարուած քննութեան սարսափ ազդող երեւոյթներուն։ Տիկինները, իրենց սալոնին մէջ թողուած՝ ո՛չ դուրս կ'ելլէին և ո՛չ ալ լրագիր կը կարդային, բայց Կասպար անոնց կը հաղորդէր արդարութեան կատարած քննութեանց արդիւնքը։

Դիպուածը այնպէս ուզած էր որ Կասպար իրազեկ ըլլար խնդրին բոլոր դարձուածքներուն և դրութիւններուն։ Սակայն դատական քննութեան արդիւնքը ամբողջովին չէր հաղորդեր Ռէժինի ու իր ծնողքին, այլ հարկ եղածը միայն, որպէս զի Ռէժինի անունը չխառնուի գործին մէջ։

(Շարունակելի)

Քաղաքական Լուրեր

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Պուէրներուն ձեռնարկը. — Ծագումը եւ նպատակը. — Հոլանտական միջամտութեան հետեւանքը. — Անգլիոյ Երեսփ. Ժողովին մէջ. — Տպաւորութիւնը Լոնտոնի մէջ։

Լոնտոն 24 մարտ. — Ստոյգ աղբիւրէ առ տեղեկութիւնները առնուած են Պուէրներու վերջին ձեռնարկին ծագմանը և ներկայ կացութեան վրայ. — Անգլեւ-հոլանտական շրջանները փոխարար 5էն հրատարակուելու բրիտանական կառավարութեան կազմէ։ Առանց պատճէնները Բրէթօրիա հասան մարտ 1էն կամ 2էն, Լորտ Քիչներ զանոնք հաղորդեց պուէր պետերուն և, մարտ 10էն, Գ. Շալք Պուրկէր Անգլիոյ բանակին ընդհանուր հրամանատարէն ազատ անցագիր մը ուզեց խորհրդակցելու պուէր միւս պետերուն՝ Գ. Գ. Շթայնի ու Տէվէթի հետ որոնք Օրանժ կը գտնուին։ Լորտ Քիչներ Լոնտոնի հետ կարճեաց փոխանակութիւն մը կատարելէ և պուէրական պահանջումը ընդունելու մասին ծագած քանի մը դժուարութիւնները կարգադրելէ ետքը, երեք օր առաջ պարտաւորուած տալու այդ ազատ անցագիրը։ Ուրիշ բան մը չկայ. ո՛չ Անգլիա ձեռնարկած է բանակցութեանց և ոչ ալ Պուէրները որ և է առաջարկութիւն ըրած են։ Կառավարական բարձր միջավայրերու մէջ այնքան լաւատեսութիւն չի տիրեր վերջին դէպքին նկատմամբ, ուսկէ խոհեմութեամբ կը շարժին և ճիշդ գաղափարներ յայտնելէ կը զգուշանան։ Պուէրական շրջանակներու մէջ կ'ըսուի թէ պուէր պատուիրակութեան արուած ազատ անցագիրը Լորտ Միթհուէնի փրկանքն է։ Այդ շրջանակներու մէջ բնաւ չընդունուիր թէ պուէր պետերուն գումարումը նախորդը եղած ըլլայ հաշտութեան բանակցութիւններուն. ընդհակառակը, կ'ըսուի թէ Գ. Գ. Շալք Պուրկէր և Շթայն պիտի տեսակցին՝ ձմեռուան եղանակին պատերազմի ծրագրին վրայ խորհրդակցելու։ Այդ կարծիքը այնքան հիմնաւոր չէ, վասն զի պուէր պետերուն և Լորտ Քիչներէ երեկուան տեսակցութիւնը կարեւորութենէ զուրկ չի կրնար ըլլալ։ Այդ տեսակցութիւնը որ Բրէթօրիայի մէջ կատարուած է, երեք ժամու չափ տեւեր է։ Լոնտոնի հոլանտական դեսպանատան մէջ կ'ըսուի թէ վերջին դէպքին համար հոլանտական կառավարութենէն խորհուրդ հարցուած չէ և թէ Անգլիոյ կառավարութեան, ինչպէս նաեւ Գ. Շալք Պուրկէրի ու անոր պաշտօնակիցներուն մտադրութիւնները յայտնի չեն։

— Ստոյգ աղբիւրէ լուր կը տրուի թէ Անգլիոյ կառավարութիւնը չի յուսար որ պուէր պետերուն գումարման հետեւանքը ըլլան հաշտութիւն կնքելու բանակցութիւններ։

— Անգլիոյ Երեսփ. Ժողովին մէջ Սըր Հէնրի Քէմպըլ Պէնըրմէն հարցուց գաղթավայրերու նախարարէն թէ ի՛նչ տեղեկութիւններ առած է Հարաւային Ափրիկէի դէպքերու մասին՝ որոնց վրայ երկարօրէն կը խօսին լրագիրները։ Պառլամենտական նախարար Գ. Պրոտրիք պատասխանեց.

«Անշուշտ պատուարժան ճէնթըլմէնը պիտի ներէ որ պատասխանեմ։ Տասնըհինգ օր առաջ Գ. Շալք-Պուրկէր ծանոյց Լորտ Քիչների թէ կը փափաքի ազատ անցագիր մը առնել՝ անգլիական գիծերը անցնելու և յետոյ վերադառնալու, որպէս զի կարենայ Գ. Շթայնի հետ խորհրդակցիլ հաշտութեան առաջարկութեան կարելիութեանց վրայ։ Լորտ Քիչնէր ընդունեց այդ պահանջումը՝ Ն. Վեհափառութեան կառավարութեանը հաւանութեամբ։»

— Պատերազմը աւարտած տեսնելու համար Անգլիացիներուն ունեցած սաստիկ անհամբերութիւնը շատ լաւ կ'արտայայտէ այն ուրախալի յուզումը՝ որ առաջ բերաւ Բրէթօրիայէն առնուած վերջին լուրը։ Թէեւ այնքան լաւատեսութիւն չի տիրեր Թրանսվալի կառավարութեան վերջին ձեռնարկին հաւանական արդիւնքին համար, սակայն մեծ կը յուսացուի որ գործը ի վերջոյ պիտի կարգադրուի։ Ուէսթմինսթր Կազէթ սապէս կը պարզէ Անգլիոյ կողմէ ըլլալիք զիջումները.— «Ընդհանուր և կատարեալ ներում ըմբոստներուն։ Պատերազմական ծախքին համաձայն, առատ հատուցումներ՝ քանդուած ագարակներու վերաշինութեան ծախքին և ամբողջ երկրին վերակազմութեանը համար. յայտարարութեան ու կարգապահութեան ուղիղ միջոցներու ընդունում։ Երբ պուէր պետերը անձնատուր ըլլան, միջոցներ ձեռք պիտի առնուին այդ պետերուն գործակցութիւնը ապահովելու երկրին ապագայ կառավարութեանը մէջ։ Վերջապէս խոստում իրական տեղական կառավարութեան մը հաստատման, ապագային։ Աւասիկ առանց են այն միջոցները զորս Անգլիացիներուն մեծամասնութիւնը պատրաստ է ընդունելու։» Աւելորդ է ըսել թէ Ուէսթմինսթր Կազէթ նախարարութեան ընդդիմադիրներու թերթն է, բայց այդ լրագիրը նոյն իսկ նախարարական շրջանակներուն մէջ այնքան համբաւ կը վայելէ և Հասարակ Ի.Ի. թէ գաղափարութիւնը այնքան մօտ է որ Անգլիոյ կառավարութիւնը անշուշտ պատրաստ պիտի ըլլայ այդ տեսակ պայմաններ տալու։ Այս առթիւ հարկ է յիշել այն գլխաւոր պայմանները՝ զորս Լորտ Քիչներ 1901 մարտ 7էն, Միտըլպուրկի մէջ, առաջարկեց Պոթա զօրավարին։ Աւասիկ այդ պայմանները.— «Այն պատերազմէն ետք թշնամութեանց ընդհանուր ու կատարեալ դադարում մը տեղի ունենայ և Պուէրներուն ձեռքը եղած, կամ կառավարական և կամ ուրիշ մթերանոցներու մէջ գտնուած հրացանները, թնդանօթները և ռազմամթերքները յանձնուին, Թրանսվալ ու Օրանժ ներում պիտի վայելեն վերջին թշնամութեանց առնչութեամբ բոլոր յանցանքներու համար, բայց ըմբոստները պիտի չարժանանան այդ ներումին։ Առանց Նաթալ կամ Քափ գաղութավայրը վերադառնալու, բայց եթէ վերադառնան, պիտի ենթարկուին այն օրէնքին՝ որ այդ գաղթավայրերուն մէջ հաստատուած է պատերազմի առթիւ։ Երբ ընդհանուր անձնատուութիւնը կատարուի, պատերազմական գերիները Հարաւային Ափրիկէ պիտի վերադարձուին։ Կառավարութիւնը անմիջապէս պիտի կազմուի, մինչեւ որ յետոյ ինքնավար վարչութիւն մը շնորհուի։»

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Երեսփ. Ժողովին մէջ. — Գ. Տէլքասէի յայտարարութիւնը. — Գ. Լուպէի ուղեւորութիւնը. — Ռուսիոյ կայսեր նամակը. — Ուղեւորութեան ծախքը։

Բարիզ 25 մարտ. — Ֆրանսայի Երեսփ. Ժողովին մէջ, արտաքին գործոց նախարար Գ. Տէլքասէ հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ Հանրապետութեան նախագահին Ռուսիա կատարելիք ուղեւորութեանը վրայ.

«Անցեալ սեպտեմբեր 21էն Նիքոլա կայսրը, երբ երկրորդ անգամ կ'այցելէր Ֆրանսան, տեսնելէ ետք բանակը ու նաւատորմը, յայտարարեց Հանրապետութեան Գ. Նախագահին թէ Վեհ. կայսրուհին և ինք խորին տպաւորութիւն մը կը տանին իրենց հետ երկրին ու հանրային իշխանութեանց կողմէ եղած ընդունելութիւններուն համար, ինչ որ դիտել տուած էին օգոստոս 22էն ի վեր նախանձայոյզն նորընտիր Տարերքներու յայտարարութիւնները։ Նիքոլա կայսրը, Գ. Լուպէի ուղղուած նամակով մը, սա կերպով կը հրաւիրէ Հանրապետութեան Նախագահը, երթալ ու անձամբ տեսնել թէ Ռուսիա ո՛րքան մտերմութեամբ և ջերմապէս կը պատասխանէ Ֆրանսայի զգացումներուն։ Աւասիկ թէ ի՛նչ կ'ըսէ Նիքոլա Բ.— «Անցեալ տարի Ֆրանսայի մէջ մեր անցուցած անմոռանալի օրերուն քաղցր ու խորին յիշատակութեանց առթ, կայսրուհին և ինծի համար սիրելի է յուսալ թէ Ֆրանսական Հանրապետութեան անխոնջ Նախագահը պիտի բարեհաճի մօտերս մեզ իրական հաճոյքը պատճառել քանի մը օր մեզի հետ անցընելու։ Կ'ըսեմ թէ ձեզի հաճելի պիտի ըլլայ, այս առթիւ, անձամբ ընդունիլ միաձայն հաւաստիքը այն ջերմագին ու անկեղծ զգացումներուն՝ որոնց Ռուսիան կը միացնէ բարեկամ ու դաշնակից Ֆրանսայի։» Երեսփ. Ժողովը, իմանալով որ Հանրապետութեան նախագահը ընդունած է այդ հրաւէրը, անշուշտ պիտի մասնակցի այս նոր ցոյցին՝ յարատեւ զօրութեանը այն կապերուն՝ որոնք Ֆրանսան ու Ռուսիան կը միացնեն՝ անոնց բարգաւաճմանը ու զարգացմանը և աշխարհի խաղաղութեան պահպանմանը համար։ Հետեւաբար պատիւ ունիմ ներկայացնելու սա օրինագիծը.— Արտաքին գործոց նախարարութեան 1902ի ելմտացոյցին մէջ 500 000 Փր.ի վարկ մը բացուած է Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին Ռուսիա կատարելիք ուղեւորութեան ծախքին համար։»

Երեսփ. Ժողովը 32ի դէմ 469 ձայնով ընդունեց այդ օրինագիծը։

— Կ'ըսուի թէ Գ. Լուպէ մայիս 15էն կամ 16էն՝ այսինքն երեսփոխանական ընտրութիւններէն վերջը ճամբայ պիտի ելլէ դէպ ի Ռուսիա։

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Մանճուրեան գործը. — Բուլերէվսքի զօրավարը. — Մեկնում դէպ ի Վարշավիա. — Գերման կուսակցութիւնը։

Նիս, 24 մարտ. — Ֆրանսական և ուրիշ լրագիրներուն գրածին հակառակ, Բուլերէվսքի զօրավարը Զարին հրամանով Բերլին ուղեւորած չէ, ինչպէս ծանուցած էին։ Զօրավարը Նիս կը գտնուի. նոր տեսակցութեան մը պահուն Բուլերէվսքի զօրավարը սա տեղեկութիւնները տուաւ.— Բուլերէվսքի զօրավարը շատ վշտացած է, օտար լրագիրներու կողմէ իրեն մասին եղած զրպարտութիւններուն համար։ Զօրավարը առանց յետաձգելու որոշած է Վարշավիա ուղեւորիլ։ Վաղը իրիկուն ճամբայ պիտի ելլէ և Բարիզ երթալով քանի մը օր պիտի մնայ. յետոյ Վարշավիա պիտի ուղեւորի Պերլինի ճամբով, ուր օր մը պիտի մնայ։

— Լեհաստանէն կը գրեն թէ Ռուսիա գտնուող գերմանական ընկերութիւնները ու հաստատութիւնները խիստ հսկողութեան մը պիտի ենթարկուին՝ Վարշաւիոյ կուսակալին հրամանով։ Լեհական լրագիր մը կ'ըսէ թէ բրուսական հպատակ յիսուն գերմաններ արտաքսուեր են Լօձէն, ճարտարագործական քաղաք մը Վարշաւիոյ մօտ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Օտար գործաւորները Անգլիոյ մէջ. — Ընդհանուր բողոք. — Քննիչ յանձնաժողով մը. — Օտար աղքատներու դրութիւնը. — Հրեաներ. — Սթանտըրտի կարծիքը։

Երկար ատենէ ի վեր Անգլիոյ մէջ խնդիր մը կայ՝ օտար գործաւորներու Անգլիա գաղթելու խնդիրը որ ընդհանուր բողոք մը առաջ բերած է երկրին մէջ։ Հետզհետէ բողոքները կը շատնան Անգլիա գաղթելու անսահման ազատութեան դէմ. բայց այդ վիճակին առջեւ, բրիտանական կառավարութիւնը որոշեց յանձնաժողով մը կազմել, որ պաշտօն ունի նախ քննութիւն կատարել թէ ի՛նչ վնասներ առաջ կու գան գաղթումի անսահման ազատութենէն։ Յետոյ տեղեկագիր մը մատուցանել թէ օտար երկիրներու մէջ այդ մասին ի՛նչ տեսակ սահմանումներ ու հսկողութիւններ կը կատարուին։ Նաեւ թէ Անգլիոյ մէջ ի հարկին ի՛նչ միջոցներ ձեռք առնելու է։ Սթանտըրտ այդ առթիւ կ'ըսէ թէ գաղթումի սահմանում մը ամենէն աւելի Հրեաներուն պիտի դպչի. Լորտ Ռոչըլտ և Գ. Նաթանիէլ Մէյէրի նոյն յանձնաժողովին անդամ կարգուիլը լաւ մտածուած բան մըն է։ Նոյն թերթը կը յարէ թէ անշուշտ կայ գաղթականութիւն մը, որ նուաղ աղտեղի հանգամանք մը ունի, և անոր հանդէպ օրէնքը պէտք է, քանի որ օտարականները աղտոտեցնելու մասին բնաւ արգելառութիւն մը չկայ։ Այդ կացութեան արդիւնքներէն մէկը այն եղած է թէ, կը յարէ Սթանտըրտ, Լոնտոնի աղքատանոցները ապաստան եղած են ուրիշ երկիրներէ փախած քաղաքական և այլ տեսակ չարագործներու։ Անոր հակառակ հրեայ գործաւորներու գաղթումը նուաղ վտանգաւոր է։ Իրաւ է որ հրեայ տարրը, մշակման այլեւ աւելի համեստ վարքի մը շնորհիւ, մեծ մրցում մը կը կատարէ անգլիացի գործաւորներուն դէմ, բայց այդ գաղթողները իրենց ժրաջանութեամբ վիճակի բարւոքում մը կ'ունենան և անոնց զաւակները պիտի կրնան լաւ քաղաքացիներ ըլլալ։ Այն պարագային մէջ, կ'ըսէ Սթանտըրտ, Անգլիոյ մէջ ալ որ պիտի ուզէ Մ. Նահանգաց օրէնքներէն հետեւիլ և երկրին վանել օտար աղքատներու զանգուած մը։ Լոնտոնի թերթը խօսքը կը վերջացնէ ըսելով որ աղքատներու իրաւունքը պէտք չէ սահմանի. բայց այդ թոյլատուութենէն անհրաժեշտ է դուրս նկատել անբարոյ գաղթողը, որ եկած է ո՛չ թէ աշխատելու, այլ ընկերութեան դէմ ձախողելու։

ՍՊԱՆԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նոր դահլիճին ծրագիրը. — Ելմտական նախարարին մէկ յայտարարութիւնը. — Ներքին գործոց նախարարը. — Կրօնական միաբանութիւնները։

Սպանիոյ նոր դահլիճին ծրագիրը, այսօր, բոլորովին ծանօթ է։ Նախագահը Գ. Սակասթա ապրիլ 3էն համար հրաւիրած է Ծերակոյտը, նախ վիճաբանելու համար Սպանիոյ Պանքային վերաբերեալ ծրագրին վրայ։ Մատրիտ Էմբարսիալ լրագրին խմբագիրներէն մէկը տեսակցութիւն մը ունեցեր է ելմտական նոր նախարար Գ. Ռոտրիկէզի հետ, որ յայտարարեր է թէ իր կացութեանը կողմնակից է պայմանաւ որ Սպանիոյ Պանքային վերաբերեալ օրէնքը բարենորոգուի և թղթադրամի շրջանառութիւնն ալ բարւոքի։ Նախարարը ըսեր է նաեւ թէ նոր տուրք պիտի չհաստատէ և պարտք պիտի չընէ։ Գ. Ռոտրիկէզ օգտակար կը համարի պանքային թուղթերուն հաշիւը կարգադրել, օգտուելով 1899 օգոստոս 12ի օրէնքէն։ Նախարարը ըսեր է թէ պէտք է աշխատիլ հասոյթներ աւելցնելու, բայց խոյս տալու և ելմտացոյցին հաւասարակշռութիւնը պահպանելու. միանգամայն յոյս ունի որ հասոյթի աւելցութիւն մըն ալ պիտի կրնայ ձեռք բերել՝ երկրին ընկերական պէտքերուն գործածելու։ Գ. Ռոտրիկէզ չի կարծեր որ հարկ ըլլայ մաքսեր և այլն ջնջել, այլ զանոնք բարեկարգել։ Անցեալ օր գումարուած նախարարաց խորհուրդին ալ մեծ կարեւորութիւն կը տրուէր Մատրիտի մէջ. վասն զի ներքին գործոց նոր նախարար Գ. Մօրէթ իր կարծիքը պիտի յայտնէր կրօնական միաբանութեանց խնդրին համար։ Նախարարութիւնը շրջաբերական մը ուղղելով բոլոր կառավարիչներուն, յանձնարարեց կրօնական միաբանութեանց համար որոշուած միջոցներուն գործադրութիւնը երկարաձգել, մինչեւ որ դահլիճը խորհրդակցի այդ մասին։

ՖՐԱՆՔԵՒՌՈՒՍ ԶԵԿՈՅՑԸ

Անգլեւճաբոնական դաշնադրութիւնը. — Գ. Տէլքասէի յայտարարութիւնը. — Ֆրանսական լրագիրները։

Ֆրանսական թերթերը հաւանութիւն կը յայտնեն Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին կողմէ Ծերակոյտին մէջ եղած յայտարարութեան՝ Ֆրանքեւռուս զեկոյցին առթիւ։ Տեմփ այդ մասին հետեւեալ տողերը կը գրէ.— «Գ. Տէլքասէ ճիշդ ցոյց տուաւ դիւանագիտական այդ պաշտօնագրին նշանակութիւնը. անոր մէջ և ոչ մէկին դպչելու բան մը կայ. կը տեսնենք թէ ամենուն ալ խաղաղութեան տարիք է և թէ օրէ օր աւելի պիտի հաստատուին այդ համոզումին մէջ։ Երբ Անգլիա ու Ճաբոն իրենց կնքած դաշնադրութիւնը միւս տէրութեանց հաղորդեցին, պէտք էր որ սպասէին և անշուշտ կը սպասէին որ այդ տէրութիւնները ձեռք պիտի առնէին իրենց նոր կացութեան անհրաժեշտ ըրած միջոցները։ Անգլեւճաբոնական դաշնակցութեան մէջ երկու բան կայ. ներշնչած սկզբունքները և երկու դաշնակից տէրութեանց կողմէ առաջադրեալ կատարուելիք հաւանական գործը։ Սկզբունքներուն վրայ ամէն ոք համամիտ է։ Ֆրանսա ու Ռուսիա ալ Անգլիոյ ու Ճաբոնի չափ, կ'ուզեն որ Չինաստանի և Քորէայի մէջ հողային, քաղաքական ու առեւտրական իրաց կացութիւնը պահպանուի։ Ֆրանսական կառավարութիւնը բաւական ատեն առաջ այդ մասին իր կարծիքը յայտներ, և անկէ ի վեր միտք փոխած չէ։ Անգլիա ու Ճաբոն իրենց պաշտպանութեանը առաջարկ այն տեսակ սկզբունքներ, որոնց մենք ալ համամիտ ենք. և հետեւաբար մենք ալ պարտինք մեր պաշտպանութիւնը ընծայել այդ սկզբունքներուն։ Անգլեւճաբոնական դաշնադրութեան մէջ նախատեսուած ապագայ գործառնութեանց գալով, Ֆրանսա և Ռուսիա բան մը միայն ըսին՝ այսինքն թէ այդ ապագայ գործառնութիւնները եթէ տեղի ունենան, և եթէ մեր շահերը վտանգի տակ դնեն, մեզի վերապահած ենք զանոնք պաշտպանելու միջոցները։ Այս յայտարարութիւնը և ոչ մէկին համար վիրաւորիչ է. այնքան բնական է, որ նոյն իսկ կրնայինք չընել, բայց քանի որ այսօր ամէն ոք թուղթերը բաց կը խաղայ և Անգլիա ու Ճաբոն ուղղամտութեամբ հարկ զատած են տէրութեանց իմացնել իրենց փոխադարձ յանձնառութիւնները, իրաւունք ունէինք միեւնոյն ուղղամտութեամբ պատասխան տալու։ Ֆրանսայի ու Ռուսիոյ ձեռնարկին գլխաւոր շահեկանութիւնը այն է թէ Ֆրանքեւռուս դաշնակցութիւնը ո՛չ միայն Եւրոպայի, այլ ամբողջ աշխարհի համար է։»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Երեսփոխանական յառաջիկայ ընտրութիւններուն առթիւ. — Ազգայնականները եւ յառաջդիմականները. — Ընտրողները ի՛նչպէս կը յաղթին. — Ո՛ր կուսակցութեան յաղթութիւնը հաւանական է։

Եթէ պէտք կայ նոր ապացոյց մը տալու թէ Ֆրանսայի մէջ հիմա բնաւ տարբերութիւն չկայ հակառակորդ հանրապետական կուսակցութեանց պատկանող բանախօսներու գործածած լեզուին մէջ, պէտք է բաւէ առաջ բերել այն բանախօսութիւնները՝ որոնք Շոմոնի մէջ արտասանուեցան, յառաջդիմական կուսակցութեան մէկ մեծ գումարման մէջ։ Այդ բանախօսութիւններ իրենց գաղափարներու պարունակութեամբ կը համապատասխանեն այն քննադատութեանց, զորս Ֆրանսական Հայրենիքի դաշնակցութեան մէջէն նշանաւոր անդամները կ'ընեն արմատական քաղաքականութեան ղեկավարներուն։ Գ. Ռիպօ ուսման ազատութիւնը պաշտպանեց, իսկ Գ. Քրօշէ խիստ բառերով քննադատեց պատերազմական նախարարութեան ձեռք առած միջոցները. Դ'Իլիոնի կողմէ ելմտական գործերուն յանձնուածը քանի մը բանախօսներու կողմէ քննադատուեցաւ։ Գաղափարներու և խօսքերու նոյնը միեւնոյն են Շոմոնի կատարուած բանախօսութեանց և Գ.Գ. Ժիւլ Լըմէթրի և Քօփէնէի կողմէ արտասանուած ճառերուն մէջ։ Հակամասոնական և ազգայնական նոր կուսակցութիւն մըն ալ կազմուած է որ մեծ գործունէութիւն ցոյց կու տայ։ Շոմոնի մէջ կատարուած գումարումէն քիչ առաջ, ազգայնական այդ նոր կուսակցութիւնը կոչ ըրած էր հանրութեան, լսելու կաթոլիկ մեծ բանախօս մը, այն է Մէօն կոմսը, որ ուսուցման ազատութիւնը պաշտպանեց և բանակին վերակազմութեան վրայ խօսեցաւ, Գ. Քօփէնէի կարծիքները յայտնելով։ Այսպէս երկրին մէջ կարծիքի հոսանք մը կը ձեւանայ, որ հետզհետէ կը զօրանայ, զանազան կողմերէ եկած յորձանքներով։ Ուժերու այս միացումէն առաջին օգտուողները կ'ըլլան յառաջդիմականները, որոնք կառավարութեան մէջ պաշտօնեաներ ունին, կուսակցութեանց անդամներու կողմէ արտասանուած բանախօսութիւնները խիստ ընդհանուր գաղափարներու շուրջը կը դառնան յաճախ, որոնք շատ բացատրութիւններու կը կարօտին, երբ կարգը գայ գործադրելու զանոնք. որով շատ ընտրելիներ այնպիսի խօսքեր կ'ընեն՝ որոնք հաճելի թուին իրենց ընտրողներուն, առանց կանխելու համար իրենց ընտրութեան յաջողութիւնը։ Բայց անգամ մը երեսփոխան ընտրուելով Խորհրդարան մտնեն, իրենց շահերուն կը նային միայն։ Այս երեւոյթը նշմարուեցաւ Ծերակոյտի վերջին ընտրութեանց առթիւ։ Ընտրելիներու մեծ մաս մը ինքզինքին այդպէս նակերտ կը ծախէին, իրենց ընտրութիւնը յաջողցնելու համար. ազգայնականները կը կարծէին թէ յաջողութիւններ ձեռք ձգած էին այդ ընտրութեանց մէջ, բայց անգամ մը որ այդ նոր ծերակուտականները Ժողովին մէջ մտան գործեցին, իրենց պաշտօնակիցներու ազդեցութիւնը կրելով յարեցան այն գաղափարին, որ հանրապետական պաշտպանութիւն կը կոչուի։ Հաւանական է որ այս պարագան նոյնին կրկնուի երեսփոխանական ընտրութեանց առթիւ. թէեւ եթէ ընդդիմադիր կուսակցութիւնը յաղթէ, բայց երբ պարտութեան մատնուի ան, կուսակցութեան ծրագիրը կը գործադրուի հաւատարմութեամբ։ Ազգայնական կուսակցութիւնը Գ. Տէրուլէտի առաջնորդութեամբ, որ բնակարան դեռ մը կը գրուի. այսօր, ժողովրդական կը կոչէր այդ կուսակցութիւնը։ Հեղինակաւոր ներկայացուցիչներ չունի երկրին մէջ, այն օրէն ի վեր, երբ Տէրուլէտ աքսորուած է. երեսփոխանական մասնաւոր ընտրութեանց մէջ ալ չէ յաջողած այդ կուսակցութիւնը, որուն պաշտօնական համար երկու ճակատ կենալ կը պակսին։ Նախ՝ վարչական կարողութիւն ունեցող անձեր, երկրորդ՝ յստակ գաղափարներով ծրագիր մը, որ դիւրաւ գործադրելի ըլլայ արդի պայմաններուն մէջ։ Գ. Տէրուլէտ էր և կը մնայ ժողովրդական մը, բայց կը զգայ թէ այդ գաղափարները որ և է յաջողութիւն չեն գտներ։ Յեղափոխականներու և Ֆրանսական Հայրենիքի Դաշնակցութեան գործունէութիւնը տեսնելով, Գ. Տէրուլէտ նամակ մը մէջ, որ հրատարակութիւն արուած է, իր բարեկամները կը յորդորէ հեռանալ Գ. Քօփէնէի կուսակցութեան։ Այս վերջինը պատերազմական նախարար եղած է. իր հանրապետական համոզումները տարակոյսի տակ չեն, բայց բնաւ համակրելի չէ ժողովրդական վարդապետութեանց։ Անիկա երբեք չէ ջատագոված կանոնադրութեան բարեփոխումը. որ և է տարբերութիւն մը չի տեսներ իր և Գ. Քրանչի գաղափարներուն միջեւ, որ յառաջդիմական կուսակցութեան ամենէն նշանաւոր անդամներէն մէկն է և պատերազմական նախարարի պաշտօն ալ վարած է։ Գ. Տէրուլէտի նման ազգայնականներ կրնան թէ՛ Գ. Ռիպոյի և թէ Գ. Քօփէնէի համար քուէ տալ, քանի որ այդ երկու պետական մարդոց լեզուն գրեթէ միեւնոյնն է։ Գ. Հաւանական լրագիրներ, ինչպէս Կոլուա Գ. Քօփէնէի ընտրական պայքարին ուժ կու տան և Գ. Քօփէնէի խօսքերը կը ծափահարեն։ Այսպէս հանրապետական կուսակցութիւնը ալ դժուարին ըլլայ թէ հանրապետութեան պաշտպանութիւն, որոնք ընդդիմադիր կուսակցութեան և արդի Ֆոնտէր ղեկավարութեան գաղափարներ կը ներկայացնեն, ամէն կերպով յաղթական պիտի հանդիսանայ երեսփոխանական յառաջիկայ ընտրութեանց մէջ։ Մեծամասնութիւնը հանրապետական շահը նկատի կ'առնէ. ընդդիմադիր կուսակցութիւնը տարբեր յղացում մը ունի, բայց ամէն պարագայի մէջ, հաւանական բան մըն է որ երեսփոխանական ընտրութեանց մէջ այսքան խնդիր առարկայ ըլլայ վարչական ձեւը։

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՏԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Երկու դաշնակցութեանց մէջ. — Գործելու ազատութիւն. — Ամերիկեան շահերը ամէն բանէ առաջ։

Ուաշինկթըն 24 մարտ. — (Թայմզի Թղթակիցէ) — Մ. Նահանգները բնաւ չեն ուզեր վէճ ունենալ՝ անգլեւճաբոնական դաշնակցութիւնը կնքող և Ֆրանքեւռուս զեկոյցը խմբագրող տէրութեանց հետ. Մ. Նահանգները կ'ուզեն երկու կողմին հետ ալ լաւ յարաբերութիւններ ունենալ, բայց Տայրագոյն Արեւելքի մասին կացութիւնը կրնայ ամփոփել երկու բառով. Անգլիա և Ճաբոն բացարձակապէս կողմնակից են ամերիկեան քաղաքականութեան, որուն, դժբաղդաբար Ռուսիա ու Ֆրանսա հետեւելու երեւոյթը չունին։ Մ. Նահանգաց կառավարութիւնը գործելու կատարեալ ազատութիւն մը կը վերապահէ իրեն համար. բայց դժուար չէ հասկնալ թէ անոր ազդեցութիւնը պիտի հակի այն տէրութեանց կողմը որոնց քաղաքականութեանը կը հաւանի և որոնց հետ շահերու նոյնութիւն ունի։ Բնաւ տարակոյս չկայ թէ Մ. Նահանգները պիտի պաշտպանեն իրենց շահերը, երբ անոնց դէմ յարձակում ըլլայ։ Ցեղակցական բնութիւնը պիտի սահմանէ փոխադարձաբար ըլլալիք բնութիւնը։

Ներքին Լուրեր

ՍԷԼԱՄԼԸՔԻ արարողութիւնը տեղի ունեցաւ երէկ Համիտիէ մզկիթին մէջ. Վեհ. Սուլթանը, կէսօրէն շքեղ հանդէսով նոյն մզկիթը գնաց և աղօթքը կատարելէ ետքը կայս. պալատ դարձաւ։ Հիւրանոցին մէջ կը գտնուէին Ռուսիոյ ու Ֆրանսայի դեսպանները՝ իրենց առաջին թարգմաններով, Ռումանիոյ դեսպանատան գործակատարը ու առաջին թարգմանը, Գերմանիոյ դեսպանատան երկրորդ քարտուղարը ու երկու հիւրերը, Մ. Նահանգաց դեսպանին երկու աղջիկները ու առաջին թարգմանը, Անգլիոյ դեսպանատան առաջին քարտուղարը և դեսպանատուններէն յանձնարարուած քանի մը հիւրեր։ Ներկաներէն ոմանք սենեկապետ Էմին պէյի միջոցաւ արժանացան կայս. մեծարանաց։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ.— Երէկ, սովորաբար Սէլամլըքի արարողութենէն ետքը, Վեհ. Սուլթանին կողմէ շնորհուած արտօնութեամբ, Ռուսիոյ դեսպան Գ. Զինովիէվ և յետոյ Ֆրանսայի դեսպան Գ. Քոնսթան պատիւ ունեցան ոչ-պաշտօնապէս ներկայանալու Ն. Վեհափառութեան։

ՀԱՍԱՆ ՖԷՀՄԻ ՓԱՇԱ.— Երէկ, Սէլամլըքի արարողութենէն ետքը, կայս. Իրատէի մը համաձայն, կայս. պալատան մէջ կատարուեցաւ Սէլանիկի նոր կուսակալ Հասան Ֆէհմի փաշայի շնորհուած Իմթիյազի պատուանշանին յանձնման արարողութիւնը. Ն. Վսեմութիւնը, պաշտօնական համազգեստով պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու։ Առաջին սենեկապետ Հաճի Ալի պէյ բերաւ Իմթիյազի պատուանշանը, որ ոսկի տուփի մը մէջ դրուած էր. իսկ արարողապետ Իպրահիմ պէյ ալ ժողովեցին։ Ն. Վեհափառութիւնը բարեհաճեցաւ իր ձեռքով այդ պատուանշանը կախել Հասան Ֆէհմի փաշայի կուրծքին և իր կայս. մեծարանքները շնորհել։ Հասան Ֆէհմի փաշա, կայս. այդ բարձր շնորհին համար, իր երախտագիտական զգացմանց հաւաստիքը մատոյց յառաջ կայս. Գահին։ Այդ արարողութեան ներկայ գտնուեցան պալատական պաշտօնատարներէն ոմանք։

— Հասան Ֆէհմի փաշա, այսօր, իր պաշտօնատեղին կ'ուղեւորի։

ԿԱՅՍ. ՄԷՆՇՈՒՐ.— Երէկ, Սէլամլըքի արարողութենէն ետքը, կայս. Իրատէի մը համաձայն, կայս. պալատան մէջ տեղի ունեցաւ ընդհ. սպայակոյտի փոխ-նախագահի օգնական Էօմէր Րիւշտի փաշայի մէնշուրի տուչման շնորհը կայս. Մէնշուրին յանձնումը։ Էօմէր Րիւշտի փաշա կայս. պալատ կը գտնուէր պաշտօնական համազգեստով։ Առաջին քարտուղար Թահսին պէյ Ն. Վսեմութեան յանձնեց կայս. Մէնշուրը որ կարմիր թաւիշէ պահարան մը մէջ դրուած էր։ Էօմէր Րիւշտի փաշա առաւ կայս. Մէնշուրը ու համբուրեց և յետոյ իր խորին երախտագիտութիւնը յայտնեց՝ իրեն նկատմամբ եղած կայս. այդ բարձր շնորհին համար։ Էօմէր Րիւշտի փաշա արժանացաւ կայս. մեծարանաց։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ.— Վեհ. Սուլթանը, հեռագիր մը ուղղելով Ռումանիոյ թագաւորին, ցաւակցութիւն յայտնեց թագուհիին մօրը մահուան առթիւ։ Կարոլ թագաւորն ալ շնորհակալութեան հեռագրով մը պատասխանեց։

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.— Կայս. պալատան առաջին քարտուղարը կրթական նախարարութեան հաղորդեց կայս. նոր Իրատէ մը՝ ծանուցանող թէ բոլոր վարժարաններու մէջ դասաւանդութիւնները, բարձրագոյն հաճութեան համաձայն, աւելի կանոնաւոր կերպով և ուսանողները լաւ բարոյականով մը օժտելու եղանակով կատարուին։ Կրթական նախարարութիւնն ալ դարձեալ հարկ եղած հրահանգները տուաւ վարժարաններու տնօրէններուն։

ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ.— Ռուսիոյ դեսպան Գ. Զինովիէվ որուն համար ծանուցուեցաւ թէ արձակուրդով Կ. Պոլսէն պիտի մեկնի, յետաձգեր է իր ուղեւորութիւնը։

ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐԸ.— Անտառներու, հանքերու և երկրագործական նախարարութիւնը, Էքրէմբաշեան հրաման մը համաձայն, զանազան մասնագէտներէ տեղեկութիւններ առաւ՝ սամ. երկիրներու մէջ երկրագործութիւնը աւելի զարգացնելու խնդրին համար. և այդ տեղեկութիւնները ծրագրի մը մէջ ամփոփելով ձեռնհաս պաշտօնատան մատոյց։ Ձեռնհաս պաշտօնատունն ալ որոշեց որ երկրագործական մեքենաներ բերուին և մասնագէտ պաշտօնեաներ երկրագործներուն ուսուցանեն անոնց գործածութիւնը, ինչպէս նաեւ ծառեր մշակելու եղանակը։ Կ. Պոլսոյ մէջ ալ երկրագործական ազդակ հաստատութիւն մը կը հիմնուի։ Անասուններու հիւանդութիւնը դարմանելու համար եւս անասնաբուժական վարժարանէն շրջանաւարտները ղրկել նահանգները։ Այդ որոշումները մատուցուեցան Մեծ Եպարքոսին։

ԷՐԶՐՈՒՄԻ մէջ կուսակալի օգնական Էմին պէյի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեր է՝ նահանգին մէջ երկրագործութիւնը աւելի զարգացնելու համար։

ԱՅՏԸՆԻ կուսակալ Բեհճէթ փաշա, անցեալ երեքշաբթի, Իզմիրի նաւահանգիստը գտնուող անգլիական Բեմպիս մարտանաւը երթալով, փոխադարձ այցելութիւն տուեր է դեր-ծովակալին։ Բեհճէթ փաշայի ժամանման միջոցին մարտանաւէն թնդանօթներ արձակուեր և նաւաստիները Համիտէ քայլերգը նուագեր են։

ԷՏԻՐՆԷԻ նահանգէն մինչեւ հիմա 1,307,730 ղրուշ ղրկուած է Հիճազի երկաթուղիի գիծին շինութեան ծախքին համար։

ԱՖԻՈՆ.— Ձեռնհաս պաշտօնատունը Աֆիոն Գարահիսարէն ափիոն բերել տալու, զոր զանազան նահանգներ պիտի ղրկէ՝ մշակութիւնը փորձելու և ընդհանրացնելու համար։

ԺԱՆՏԱԽՏ.— Չորեքշաբթի օր Պէնհազիի մէջ (Տրիպոլի) ժանտախտէ երկու դէպքեր պատահեր են և Տէրնէի մէջ ալ երեք մահեր։

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ դեսպանը երէկ Ֆէնէրի Պատրիարքարանը գնաց և Տ. Եոաքիմ Սրբազանը շնորհաւորեց՝ անուանակոչութեան տօնին առթիւ։

ՊԱԼԱԹՈՒ Թաղին մէջ Ալիանս Իզրայէլիթի հրէական վարժարանը քանի մը օր պիտի փակուի, վասն զի աշակերտներէն երկուքը կարմրուկէ բռնուած են։

ԼՈՆՏՈՆԻ մէջ, անցեալ չորեքշաբթի, տեղի ունեցեր է Այտընի երկաթուղիի Ընկերութեան բաժնետէրերու ընդհանուր ժողովը։ Վարչական խորհուրդին տեղեկագիրը կարդացուեր է, ուրկէ կ'երեւայ թէ 1901ի երկրորդ վեց ամսուան հասոյթն է 201,614 անգլիական ոսկի և ծախքը՝ 63,728, որով զուտ հասոյթը կ'ըլլայ 157,886 ոսկի։ Որոշուեր է առաջ չիքէն հանգանակէն վճարել։ Առաջին վեցամսեայի համար ալ վեց չիքէն տրուած էր։

ԱՐՄՏԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ.— Անցեալ օր Անատօլըէն Կ. Պոլիս բերուեցան 6000 քիլէ ցորեն և երէկ ալ 3,500։ Առանց 5,500ը Պոլսոյ հրապարակին համար էր և միւսներն ալ մօտակայ ջաղացներէն մէկին կը վերաբերէր։ Ժամանումներու այդ առատութեան հետեւանք վիճակին հակառակ գիները չեն բարձրացած և նոյն իսկ թուլութիւն մը կայ, ինչ որ արդիւնք է սա պարագային թէ Կ. Պոլսոյ սպառման պէտքերին համար բաւական ալիւր կայ։ Անատօլըի ցորենները ծախուեցան Լիտրային վար $9^{7}/_{8}$—10 ղրուշի, անոնցմէ համաձայն՝ այսինքն տասնըուան գինեբէն բերդաշինչեր ջիլէին 10 փարա պակաս։ Կարծր ցորենը անփոփոխ է՝ այսինքն օխան 30—35 փարա, տեսակին համաձայն։ Կարծր ցորեններէն բաւական գնում կատարուեցաւ Սէլանիկ, Վոլօ, Սուրիա ու Արշիպեղագոսի նաւերու ղրկելու համար։

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԻՒՆ.—Ռէժիի Սագըզ շոգենաւը, անցեալ շաբթու, Իզմիրի ջուրերուն մէջ բռներ է Շէօթայէն եկող տաղաւառնաւ մը՝ որ 6000 քիլօ ծխախոտ կը պարունակէր։ Սագըզի նաւապետը՝ Ալեքսանին էֆ. ոտքէն թեթեւապէս վիրաւորուեր է, մաքսանենգներուն կողմէ պարպուած հրացաններէն։

ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ.—Այս տարի Սուէզէն անցնող իսլամ ուխտաւորներուն թիւն է 19,538։

ՇԱՏԱԿԵՐ.—Իզմիրի Իտատիէ վարժարանին աշակերտներէն Մէհմէտ, անցեալները, տասնում նախաճաշը ընելէ ետքը կ'անօթենայ եւ տեսնելով որ ցերեկուան ճաշին ժամանակ կայ, պատառ մը բանի կ'ուտէ՝ այսինքն քառասուներկու կտոր պաքսիմատ, 2 սխտորով աշուրէ, 2 նարինջ եւ 100 դրամ մանուշ։ Այդքան թեթեւ ճաշ մը անբաւական գալով, ճաշի ժամանակ ալ սովորականին պէս կը ճաշէ։

ՊՐՈՒՍԱՅԻ մէջ յոյն երիտասարդ մը, իր յոռի ընթացքին համար, վտարուած էր նշանածին տունէն։ Անցեալները կ'որոշէ քանի մը ընկերներով աղջիկը փախցնել. ուստի գիշեր ատեն կ'երթայ նշանածին տունը. դուռը կը զարնէ, աղջիկը կը բանայ, եւ երիտասարդը վրան կը յարձակի դուրս քաշելու համար. աղջիկը կը պոռայ եւ մայրը վրայ կը հասնի։ Երիտասարդը դաշոյնը քաշելով վայրկենապէս կը սպաննէ խեղճ կինը։ Ոճրագործը քիչ ետքը կը ձերբակալուի։ Նոյն գիշերը համանման դէպք մըն ալ Պրուսայի հէյքելեակ թաղին մէջ կը պատահի եւ դարձեալ աղջկան մը մայրը ծանրապէս կը վիրաւորուի։

ՍԸՎԱՃԻ Հօֆեթ գաւառակին Թուռէքճէ գիւղին մէջ անցեալները լեռնէն քար մը գլորեր է Փիլիպպոսօղլեր բնակարանին վրայ, որուն մէկ մասը աւրուեր է։ Մեծ ու պզտիկ ութ հոգի եւ քանի մը անասուններ փլատակներուն տակ մնացեր են։ Գեղացիներ կատարելով խոշոր հողերը, դիակները հաներ են. պզտիկները տակաւին կը շարունակուին։ Այդ արկածէն ողջ մնացողներուն հարկ եղած օգնութիւնները եղած են տեղական կառավարութեան կողմէ։ Նոյն գիւղին մէջ ուրիշ եւս աւելի մեծ քար մը վերի ժայռէն անջատուած կ'երեւայ, ինչպէս նաեւ մօտակայ այլ վտանգաւոր քարեր կան, որոնց ոչնչացման համար պէտք եղած է տնօրինելու համար։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.—Անցեալ շաբաթ Իզմիրի մէջ հայ դերձակ մը՝ Պալճեան անուն, անձնասպան եղեր է ատրճանակով։ Եղբայրը ու եղբօրը կինը հեռու թողնելով տուն մը սենեակը փոխադրեր եւ տեսեր են թէ Պալճեան դիակին բնկած է՝ գլուխը ջախջախուած։ Մահճակալին երկաթէն շղթան մը անցուած էր. ուրկէ կը հասկցուի թէ Պալճեան նախապէս փորձեր է ինքզինքը կախել։

ՍԷՅՏԻՔՕՅԷՆ (Այտըն) կը գրեն թէ քանի մը օրուան մէջ Այտընի Իզ․ անտառներուն ճամբով, անցեալները սրճարանէն տուն գացած ատեն, գիւղացի մը վրան յարձակելով դաշոյնով մը զայն վիրաւորեր ու փախեր է։ Այտընի Իզմիրի Ազգային հիւանդանոցը թէեւ տարուեր, սակայն օր մը ետքը մեռեր է։

ԷՏԻՐՆԷ ԳԱՊՈՒԻ կողմը Թօփալ Ճէմալի տանը մէջ վէճ մը գործուեցաւ։ Վաղեմի չարագործ մը՝ Գարա Պօլլա Իպրահիմ դաշոյնով վիրաւորեց իր կինը անամօթ ձեռքով։ Այդ անձը բնաւ չէր աշխատեր եւ կ'ապրէր իր կնոջ դրամովը, վասն զի այդ վերջինը տան մը մէջ խոհարարութիւն էր։ Իպրահիմ նորէն դրամ ուզեց կնոջմէն, որ չտուաւ, ըսելով որ ցոփութեան մէջ կը վատնէ իր աշխատութեան արդիւնքը։ Իպրահիմ բարկացաւ եւ դաշոյնը քաշելով մխեց կնոջը կողը։ Կինը քիչ ետքը մեռաւ։ Ոճրագործը փախած է։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ.—Մեր ընթերցողներէն բէն անոնք որ կը փափաքին զանազան ապրանքներ գնել նպաստաւոր գիներով, թող այցելեն Շըմիզըրի Իւնիվէրսէլ (Բերա, Մեծ փողոց, Թիւ 399) վաճառատունը, որ ուզելով գոհացում տալ իր բազմաթիւ յաճախորդներուն որոշած է յառաջիկայ երկուշաբթի մարտ 11/24էն սկսեալ բացառիկ վաճառում մը ընել իր ապրանքի բոլոր մթերքին համար։ Տնօրէնութիւնը բաժնին մէջ կարդալ այս բացառիկ վաճառման մանրամասնութիւնները։ 5—12

ՇԱՄԱԽԻԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Շամախում երկրաշարժից վնասւածներին օգնող կոմիտէտը ստացել է հետեւեալ տեղեկութիւնները։ Փլատակների տակ մնացած մարդկային դիակները այն աստիճան հոտել են, որ բժշկական խորհուրդը որոշել է այլեւս փորուածքները չշարունակել. որովհետեւ քաղաքում տարափոխիկ եւ վարակիչ հիւանդութիւններ կարող են շուտով տարածվել։ Բաղնիքների մեծ մասը մնացել է առանց փորուածքի։ Ոսկեան հարստութիւններ են թաղւած այդ փլատակների տակ։ Շամախու ոչ-քրիստոն եայ կանայք ոսկէ եւ արծաթէ զարդեր շատ ունեն, նոյնպէս նրանց հագուստեղէնը թանկագին կտորներից են կարվում. Սովորութիւն կայ նրանց մէջ բաղնիք գնալու ժամանակ հագնել ամենաթանկագին հագուստներ եւ զարդարվել

ոսկիներով եւ այլ թանկագին քարեղէններով։ Ահա այդ բոլորը քարէ կոյտերի տակ է մնացել եւ բժշկական խորհուրդը որոշել է ծածկել կիրով։ Շամախեցիներից մեծ բազմութիւն իրանց ընտանիքներով սկսել են գաղթել դէպի Բագու եւ Թիֆլիս։ Ինչ պէտի լինի այդ խեղճերի վիճակը։ Գողութիւնների եւ թալանումների թիւը շատացել է։

Պաշտօնական տեղեկութիւններից երեւում է, որ նոյնպէս քաղաքից դուրս եւ աւերակ են դարձել աւելի քան 33 գիւղեր, նոյնպէս բազմաթիւ մարդկային զոհեր կան։ Մարդիկ այնտեղ եւս մնացել են բաց օդի տակ. հացի, տաք շորերի եւ փողի սաստիկ կարիք կայ, մինչդեռ կառավարական գործակալների ամբողջ գործունէութիւնը կենտրոնացած է քաղաքում վնասւածներին օգնելու գործի մէջ։ Կոմիտէն որոշեց գիւղերում օգնութեան գործը կազմակերպելու համար՝ անմիջապէս ուղարկել Շամախի Բագուի Հայոց եկեղեցիների գործակալ Արսէն վարդապետին եւ նահանգական մէջլիսի նախագահ Հաջի Մէջիտ էֆէնտիին, թէպէտ այնտեղ արդէն, Պ. Նաչալնիկի կարգադրութեամբ, գիւղերը պտտում եւ վիճակագրական տեղեկութիւններ են հաւաքում գաւառական բժիշկը, հարկերի տեսուչը, ճարտարապետ Նիկոլաեւը եւ Բագուից ուղարկւած բժիշկ Տ. Ներսէսեանը, սակայն կոմիտէի կողմից նիւթական օգնութիւնը անհրաժեշտ համարուեց։

Մինչեւ այսօր միայն Բագուեցիների մէջ ժողովւած է 45383 ռ. 26 կոպէկ եւ ծախսւած է մօտ 30183 ռ. 80 կոպէկ։ Ուսանողներ ուղարկելը դադարեցրած է, դահլիճը կայ բժիշկներ՝ վիրաւորներ կապելու համար։ Պ. Թագիեւը դիմեց տեղիս շոգենաւային ընկերութիւններին, որ յօժարեն Շամախեցիներին ձրի տեղ տան։ Առաջուց շաբաթ եւ կիրակի օրերի ընթացքում ստացւեցին մօտ 70 մեծ արտադասատներ, որոնք նոյն օրերում ուղարկւեցին Շամախի։ Նորից ընկերութիւնը մի վրան ուղարկեց, որի տակ կարելի է զետեղել աւելի քան 70 հոգի։ Մի խօսքով, տեղիս կոմիտէն մեծ եռանդով է գործում եւ ինչ հնարաւոր է անում է։ Մեր կողմից մնում է միմիայն ցանկանալ կոմիտէին, որ այդպիսի սիրով գործում է յօգուտ դժբաղդացած Շամախեցիների։

Վլադիկավկազի բնակիչ խանի կին Նիւյօմանսուլտան Իսրաֆիլբէկովա ուղարկել է Շամախի Հասան բէկ Մելիքովի անունով 1500 ռ. եւ առաջարկել է այդ գումարով 20 ընտանիք Թուրքերից ուղարկել Վլադիկավկազ, ուր յանձն է առնում նոցա բոլորին կը պատսպարէ եւ կը կերակրէ, մինչեւ որ իրենց դրութիւնը կը պարզւի։ Սակայն Հասան բէկը, տիկնոջ շնորհակալութիւն յայտնելով, խնդրեց այդ փողը, որպէս ճանապարհի ծախս տալ այն ընտանիքներին, որոնք կամենում են Բագու գնալ, որովհետեւ շամախեցի Թուրք ընտանիքներից Վլադիկավկազ գնալու ցանկութիւն ոչ ոք չէ յայտնում, թէ ըստ իր կողմից նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց տիկնոջը։

Ռուսաստանի զանազան քաղաքներից նոյնպէս ստացւում են նուիրատուութիւններ, սակայն ոչ կոմիտէի հասցէով այլ ուղղակի նահանգապետի անունով։ Նոյնպէս նահանգապետի տրամադրութեան տակ են Թագաւոր Կայսրի նուիրած գումարը, Թագուհի-մայրինը, Մեծ իշխանների, Կովկասեան կառավարչապետի, Բալթիական եւ Կարմիր Խաչի ընկերութեան նուիրած գումարները, մօտ 88,000 ռուբլի։ Որքան շուտ գործադրւին այդ գումարները՝ այնքան լաւ կը լինի. որով հետեւ ճնշուող գիւղերին ու տառապող թէկ հիւանդութիւններին աւելի զոհեր կը գնան, քան երկրաշարժից վնասւողներ։

Ազգային Լուրեր

Փետր. 23ին, շաբաթ, երեկոյեան ժամը 6ին (Ը. Ե.) Ս. Էջմիածնի տաճարում վերջին հանդիսաւոր գիշերին ներկայ էին՝ Ս. Հայրապետի հրամանով՝ Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունեան, Թիֆլիսի առաջնորդական տեղապահ Տ. Գարեգին. Ս. Հայրապետի դաւանորդները եւ գիւտանաբեր Տ. Կորիւն վարդապետ ինչպէս նաեւ, դարձեալ Ն. Ս. Օծութեան կողմէն, Տիրայր, Մատթէոս եւ Դիոնէսիոս վարդապետները. Այդ երեկոյ ներկայ էր նաեւ Վաղ Տ. Կիւրեղ գիտնական Սարգիսեան, պատմաբան Գէնէրալ Պօղոս Մանուկեան եւ բոլոր ներկայացուցիչներ, զօրքեր եւ ժողովուրդի մեծ բազմութիւն։ Հետեւեալ օրը կիրակի առաւօտեան ժամ 1ին, հանդիսութեամբ վեհարանէն հոգեւորականները եւ ներկայացուցիչները բաւն. որոնց վրայ ունկնդիր էին ուխտեր, հանդիսաւոր դաշտը դուրս բերին իր առաջքէ վանքը Մայր տաճարը։ Պատարագի կէսին Ս. Կաթողիկոսը իջաւ Ս. Տաճար։ Ն. Ս. Օծութիւնը հանգստեան յետ յետ-աւելը օրհնելով, խօսեցաւ հայ պրոֆեսորներու մասին։ Դրացը եկեղեցւոյն բուլը հանուեցաւ յետոյ, ուր խուռն բազմութիւն մը կար, վերջերէն լեզուով դամբանական խօսեցաւ վերջի հնդէլ պատմական Ջանալիեւ։ Այդ դամբանականը ուրիշ անգամ մը կը բերենք Արեւելքի մէջ։

—Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյն պաշտօնեաները խնդրագիր մը զրկեր են Պատրիարքարան, որով իրենց չառնուած ամսաթոշակները շուտ վճարուած չըլլալը կը յայտնեն, եւ անմիջական կարգադրութիւն կը խնդրեն, ըստ որում նախորդ

Թաղ. Խորհուրդը սնտուկին տումարները եւ այլ հաշիւները յանձնած չէ տակաւին նոր Թաղ. Խորհրդին։

—Նորատունկեան Վսեմ. Գաբրիէլ էֆէնտիի հիւանդութիւնը իր ընթացքը կը շարունակէ կանոնաւորապէս եւ աւելի բարւոք հանգամանք մը ունի։ Եկեղեցական ու աշխարհական անձնաւորութիւններ մէջը Ն. Վսեմութեան բնակարանը կ'այցելեն, տեղեկութիւն առնելու։

—Աղեքսանդրիայէն Պատրիարքարան զրկուած հեռագիր մը կ'իմացնէ թէ վերջին կիրակի օր Աղեքսանդրիոյ մէջ Թաղական Խորհրդոյ ընտրութիւն կատարուեր է։ Այդ ընտրութեան մէջ անկանոնութիւններ տեղի ունեցած ըլլալը ծանուցուած է քանի մը ազգայիններու կողմէն։

—Եէնի Գաբուի քարոզիչ Տ. Վահան վարդապետ Ցակոբեան յառաջիկայ եւ բերզօրթի օր հրաւիրուած է Կրօնական Ժողովին ներկայանալ։

—Ռումանիոյ Պօղա Տող քաղաքին մէջ 75 Ֆր. հաւաքւելով Կարնոյ որբանոցին համար, Պատրիարքարան զրկուեր է։

—Պէօյիւքտէրէէն հանրագիր մըն ալ զրկուեր է Պատրիարքարան, ուսանողներու փոխադրութեան մասին։ Ստորագրողները կը յայտնեն թէ աղջիկները հեռու վարժարանը փոխադրուած ըլլալով՝ չեն ուզեր դպրոց երթալ եւ տուներնէն անդին կը թափառին. կը խնդրեն որ Պատրիարքարանը անմիջական կարգադրութիւն մը ընէ այս խնդրոյն համար։

—Խաս Գիւղը, որուն որոշումներուն մէկ մասը հաղորդած էինք երէկ, նաեւ հետեւեալ որոշումները առաւ.— Սասոյ Կաթող. Ցովհաննէս Գէորգեան եպիսկոպոսի հանգստեան նամակներով Կաթողիկոսին մը անմիջական ներկայութիւնը անհրաժեշտ համարելով՝ խնդրած էր քանիցս որ Մշոյ Առաքելոց Սաղմոսավանքը եպիսկոպոսի ընտրութիւնը կատարուած նկատելով՝ վաւերացուի եւ անյապաղ ղրկուի Սիս։ Սակայն Ժողովը նկատելով որ այս առաջարկը չէր կրնար օրինաց համաձայն համարուիլ, որոշեց գրել Կաթող. Տեղապահին, թէ այս մասին տրուած նախորդ որոշում մը աղբիւր գործադրութեան դրուած ըլլալով՝ օրինաց համաձայն նորէն պէտք կատարուի այդ ընտրութիւնը։—Պրուսայի առաջնորդ Արշարունի Ցովհաննէս եպիսկոպոս գրած հրաժարականը նկատողութեան առնելով՝ որոշեց անյետաձգելի համարել զայն։—Գալիքէրիոյ այցելու հայրն Պօղ Աճեմ Բարթողիմէոսի վարդապետի հետեւ ութեան եւ այլ եւս գործելու անկարողութեան մասին տեղեկութիւն առնելով՝ որպէս չէր ընդունիլ անոր հրաժարականը եւ յանձնեց ընտրութիւնը յառաջիկայ նիստին յետաձգել։—Ս. Պատրիարքը՝ ի գիտութիւն հաղորդած ըլլալով Բ. Դրան մէկ ծանուցագրին պարունակութիւնը, ի մասին երկու նորընծայ եպիսկոպոսներու ուղեւորութեան, Ժողովը իր գոհունակութիւնը յայտնեց։ Մշոյ Գաւառ. Ժողովոյ հանգստեան գրով մը իր գոհունակութիւնը յայտնած ըլլալով Պատր. Փոխանորդ Խորէն վարդապետի մասին, Ժողովը որոշեց իր ալ գոհունակութիւնը յայտնել գրով մը։—Ս. Պատրիարքը Բաղդադի երկրաշարժէն տուժածներուն անմիջական պէտքերուն համար ասկէ առաջ 20 ոսկի Նպաստից սնտուկէն նպաստ մը զրկած ըլլալը հաղորդելով, Ժողովը այս մասին իր գոհունակութիւնը յայտնեց եւ որոշեց նոյն արկածեալներուն վիճակին հարկ եղած գործառնութիւնները եւս փութացնելու։—Բաղէշի Գաւառական Վարչութիւնը այլ եւ այլ գիրերով այս անգամ եւս Առաջնորդին ներկայութիւնը իրենց վիճակին համար անհրաժեշտ համարելով խնդրած էր որ նորընտիր Առաջնորդ Վահան վարդապետ Տ. Ցովսէփեան փութացուի Բաղէշ. սակայն Վահան վարդապետ այս անգամ կրկնած ըլլալով իր հրաժարականը այս պաշտօնէն, Ժողովը յետ խորհրդակցութեան ցոյց տրուած պատճառներ անհիմն նկատել է՝ որոշեց անընդունելի համարել հրաժարականը, եւ սաստել զինք որ առ յաղթող մեկնի իր պաշտօնատեղին։—Նպաստից Ցանձնաժողովոյ հրաժարման նկատառութիւնը վերապահեց յաջորդ նիստին, միեւնոյն ատեն յայտարարելով որ մինչեւ ցնոր անօրինութիւն շարունակէ ան իր պաշտօնը։—Ասոնցմէ զատ Ժողովը որոշեց նաեւ թէ այն եկեղեցականները որոնք չեն յօժարիր գաւառական պաշտօն ընդունելու եւ իրենց մէջ բերած պատճառ երբ չեն կրնար ժողովականներուն մէջ համոզում գոյացնել այս մասին, այնպիսիները խստիւ պատժուին մայրաքաղաքէս եւ Թաղերու մէջ ալ ոչ եւ է պաշտօն վարելու։

—Հանգուցեալ Օր. Նուարդ Գ. Մըսըրեան հոգւոյն համար, վաղը առաւօտ, (17 մարտ) յատուկ, պատարագ եւ պաշտօն պիտի կատարուի Մաքրի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ։ Ինչպէս ծանուցուեցաւ Ս. Պատրիարքը վաղը նոյն եկեղեցին մէջ քարոզ պիտի խօսի։

—Ղալաթիոյ Խնամակալութեան անդամ Ցովհաննէս էֆ. Մուրատեան 1437 թուականէն հնոց թուղթ մը գտած է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին մասունքին։

—Լուսինեան Զանկին տաթիւ, Ս. Պատրիարքը, շնորհակալական այցետոմսեր պիտի ղրկէ լաւին կառավարութեանց դեսպաններուն եւ պալատի Նուիրակ Տ. Պանէթթիին։

—Ռուսճուքէն Կարապետ քահանայ գրած է Պատրիարքարան թէ գաւառացի ամուսնացեալ աղջկան մը վերջերս պատկերէ է թուղթ կնոջ մը հետ։ Կրօնական Ժողովը իր վերջին նիստին մէջ կարգադրեալ

այդ գիրը, որուն Պուլկարաց Էկզարքին նկատողութեան յանձնել խնդրել, այս տաթիւ յայտնելով թէ ամուսնացած անձերու վերջին ամուսնութիւնը արգիլելու համար միջոցներ ձեռք առնուին։

—Ուսումնական Խորհուրդը երէկ գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ։—1. Խորհուրդը նկատելով որ կերակրորեայ գասախօսութիւնները բանտաշր պատճառներով, երկու շաբաթ յառաջացուցած եւ Զատկական տօները կը մօտենան, որոշեց նոյն դասախօսութիւնը յառաջիկայ զատկական տօներէն ետքին, եւ կատարել զանոնք յաջորդաբար հինգ կիրակի օրեր։—2. Ասկէ առաջ քննութեան յանձնուած էին երկրաչափական դասագիրք մը եւ «Նոր Դպրոց» անուն գործ մը։ Ցանձնարարեալ քննութիւնները ցարդ աւարտած չըլլալով, Խորհուրդը որոշեց հրաւիրել վերջնապէս քննիչները՝ որ հանին փութացնել քննութեանց արդիւնքը։— 3. Թրքէ ղօլուէն Շիշլի քահանայի նախաձեռնութեամբ եւ տեղւոյն բարեսէր տիկնանց ձեռնտուութեամբ վերջերս աղջկանց դպրոց մը բացուած եւ յարմար ուսուցչուհի մը խնդրուած էր։ Ուսուցչուհին որոշուած ըլլալով, Խորհուրդը ի ներկայութեան ինչ ինչ բանակցութիւններ ունենալու յիշեալ ուսուցչուհւոյն հետ իր պաշտօնին նկատմամբ եւ որոշեց հաղորդել զանոնք Շիշլի քահանային։—4. Ուսուցչաց Օգնութեան Սնտուկին հետեւեալ նուէր տուուութիւնները եղած են.—Նախորդ գումար 2603. Գումգաբուի գրքի վարժ.—Եղուարդ էֆ. Գէորգեան, 26. Մագասեա էֆ. Պասմաճեան, 30. Օր. Վիրժինի Այվազեան, 10. Օր. Մաքրուհի Կրմիրճեան, 10. Օր. Թագուհի Վարժապետեան, 10։ Գումար 2,689 դրուշ։

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ Գրական եւ Քաղաքական Շաբաթաթերթի Գ. տարեշրջանի 11րդ թիւը հրապարակ ելաւ այս առաւօտ, հետեւեալ շահեկան բովանդակութեամբ.

Պաշտօնի Երկարութիւն. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ։—Քննադատականներ. Տ. Ա.—Գրական ժամանց. ԳՐ. ՄԱԼԽԱՍ։— Բանաստեղծութիւններ. Խոնջէնք ՎԱՐԴԳԷՍ. Մեռեր ՏԻԿԻՆ ԷՏՄՈՆ ՌՈՍԹԱՆ (Թարգմ.)։—Պրուսայի առաջնորդը եւ իր նամակը (Խորգ.)։— Զմրան Ֆօրբուանթ. Վ. ՄԱԼԷԶԵԱՆ.— Ջերմակ հովանաւոր տիկինը (Զաւակին Նուիրուիլ) ԱՆԱԹՕԼ ՖՐԱՆՍ — Կնոջ բաժինը. Ե. Տ. ՑԱԿՈԲԵԱՆ.—Ձար տարապետութիւնը իբր բանաստեղծութիւն (Թարգմ. ռուսերէնէ)։— Ցուցակներ։

ՄԱՍԻՍի տարեկան բաժանորդագինն է, նախապէս երկու տարին վճարուելու պէս, Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրշ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրշ.։ Արտասահման 12 ֆրանք կամ 5 ռուբլի։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

ԿԱԼՈՒԳԱՅ, 3 Մարտ

Իմ անցեալ տարուայ նամակներից մէկի մէջ ես այն միտքն էի յայտնել, որ հայ թատրոնական գործի համար Բագուի հողը հասունացած չէ. եւ որքան էլ մեր դերասանական խմբի գործերը ժամանակաւոր յաջողութիւն ունենային այնտեղ, մի օր վերջ ի վերջոյ նրանց պէտք է խուսափէին։ Բագուի միջնոլորտը եւ նրա մարդկանց ես լաւ էի ճանաչում։ Եւ ես տեսնէի չզարմացայ երբ մի տարուայ բացակայութիւնից եւ հայերէն թերթեր կարդալուց յետոյ ես հետեւեալ տեղեկութիւնները կարդացի Կովկասի թերթերում.—

«Ի՞նչ է եկանք Թիֆլիսից» ահա ինչ ենք լսում դերասաններից։ Սա մի դառն ճշմարտութիւն է ամփոփուած երեք բանի մէջ. մի իրական յանդիմանութիւն Բագուի հայ հասարակութեան հասցէին, որը մինչեւ կոկորդ խրւել է գձուձ հոգսերի մէջ այնպէս, որ նրան անդունդից հանելու համար ոչ ոքին ջանքեր են հարկաւոր, իսկ մեր դերասանները, ո՞վ չը գիտէ, որ այդպիսի ջանքեր գործադրելու եւս անկարող են։ Անմտութիւն է նրանցից պահանջել աւելին՝ քան նրանք կարող են տալ։

«Դատարկութեան ամէնքը բողոքում են համարում, բայց ոչ ոք չի մտածում, ոչ ոք չէ ուզում այդ ծանրութեան դէմ մի հաղթական մասը կրել իր ուսերի վրայ։

«Ո՞ւր են մեր թատրոնի մեծահարուստներ ներկայացուցիչները, որոնք երբ թէ նուիրուած էին գործին մի ժամանակ եւ կարգ ու կանոններ էին թելադրում դերասաններին, եւ այդ բնական էր համարվում. Իսկ այժմ մինչեւ անգամ չեն յաճախում էլ թատրոն՝ Հայոց ներկայացումներին. Այժմ երբ նոյն այդ դերասանները, փորձում են գործել ինքնուրոյն կերպով, ոչ ոք չէ մտածում նրանց, ոչ ոք չէ խրախուսում նրանց։ «Կապէ՛ք տաւր ձեռքն, տալ որ օգնէք քեզ — այս է եղել նախկին թատերական զեկավարների յանկերգը այդ գործում եւ այժմ էլ նոյնն է։

«Ներկայացումները իրենց ծախսը չեն ծածկում, որովհետեւ ժողովուրդը չէ յաճախում թատրոն, առաւել եւ ամէնքը հայ բանից, մտածելով նաեւ թէ արժէքը էժել է 4 կոպէկ — եւ սրանով ամէն բան բացատրւում է դրանքն։ «Նաւթ եւ թատրոն, «թատրոն եւ նաւթ», բնական է երբ մէկը տրուի միւսի կողքին, այն միւսն էլ կը սեւանայ... սակայն դրանով մենք միայն մի բան ենք ուզում ապացուցանել հաղթարկրոցը անգամ, թէ սեւացողը խկատէս մենք ենք, որովհետեւ մեր մէջ դէպ ի այդ կրթական հիմնարկութիւնը սպիտակի նշոյլ անգամ չէ եղել սկզբից ի վեր եւ դերասանները իրաւունք ունեն մեր սեւութիւնը երեսով տալ, ասելով «Ի՞ զուր եկանք Թիֆլիսից»։»

Բագուի դերասանական խումբը Տիկին Սիրանոյշի մասնակցութեամբ, վերջացնելով թատրոնական սեզոնը այդ քաղաքում, Նոյեմբերումս, ըստ եղած հաղորդումներ, թերթերը, գնալու է Մոսկուա եւ Ռուսաստանի մի քանի հայաբնակ քաղաքները։

Հաւանական է որ եկող տարի թատրոնական գործը կարգի կ'ընկնի Թիֆլիսում, որովհետեւ Նոյեմբերումս կառավարութիւնից հաստատուել է Հայոց դրամատիքական Ընկերութեան ծրագիրը։ Լաւ ուժերից բաղկացած մի խումբ, մանաւանդ երբ նորակազմ Ընկերութիւնը լաւ ջանք տանի, կարող է աւելի լաւ եւ աւելի հաստատուն ապագայ ունենալ քան Բագուում, որտեղ գործերը աւելի եւ վատթարանում են եւ թատրոն յաճախող բազմութիւնը մեծ մասամբ բաղկացած յաջող գործերի մէջ գտնուող, եւ ոչ գաղթականաց անհաղթ սիրող անձնաւորութիւններից. այսօր դրամական հակառակ պայմաններ մէջ ժամանակ չունին թատրոնով զբաղելու։

ԱԲԷԼ ԱՊՐԷՍԵԱՆՑ

Հեռագիրներ Այսօրուան

(Աժանս տը Քոնսդանդինոբլ)

ՊԷՏԵՐՍՊՈՒՐԿ, 28 մարտ.—Պուլկարիոյ Նախարարապետ Պ. Տանէվ հոս հասաւ։

ՊԷԼԿՐԱՏ.—Սերպիոյ բանակին Հրամանատար Կրէկազ-վիչ զօրավարը, իր խնդրանքով, պաշտօնէ զրկուեցաւ։ Զօրավարը Միլանի յաջորդած էր։ Հրամանատարութեան այդ պաշտօնին պիտի կոչուի սպայակոյտի պետ Միշքովիչ զօրավարը։

ՓԱՐԻԶ.—Փրանսայի Սենաի. Ժողովը ընդունեց ընտրական շրջանակներու բաժանման ծրագիրը զոր քարեւարդած էր Մերքըլորը, համաձայն իր այն քուէին որով մէկ կողմ թողած էր երեսփոխանական պաշտօնին վեց տարի տեւելու մասը։

(Աժանս Նասիոնալ)

ՓԱՐԻԶ, 28 մարտ.—Թրանսվալի Ներկայացուցիչ Տօքթ. Լէյտս հոս հասաւ։

—Լորտ Ռօզպէրի Փարիզ ժամանեց, բայց քանի մը գործակատարութեանց կողմէ հաղորդագրած տեղեկութիւններու համեմատ, Տօքթ. Լէյտսի եւ Լորտ Ռօզպէրիի միեւնոյն ժամանակ Փարիզ գտնուիլը բոլորովին դիպուածական է եւ բնաւ վերաբերութիւն չունի՝ Անգլիոյ եւ Թրանսվալի միջեւ կատարուած հաշտութեան բանակցութիւններուն։

ԼՈՆՏՈՆ.—Անգլիոյ պատերազմական նախարար Պ. Պրոտրիք եւ Լորտ Քիչնէր միջեւ կը թղթակցին, բայց լրագիրներուն որեւէ է տեղեկութիւն չէ հաղորդուիր։

—Կէս-պաշտօնական զեկոյց մը կ'ըսէ թէ Պ. Շ.-լը Պուրկէրի եւ Շթայնի միջեւ կատարուած բանակցութիւնները զաւակական արձակուրդին ետքը պիտի հաղորդուին Անգլիոյ Խորհրդարանին։

ՓԱՐԻԶ. Ֆիկառօ կը ծանուցանէ թէ Տօքթ. Լէյտսի Փարիզ հասնելուն նպատակն է տեսակցիլ Անգլիոյ աղատական կուսակցապետներուն հետ, որոնք հոս կը գտնուին երէկուընէ ի վեր։

ԼՈՆՏՈՆ.— Սէսիլ Ռոտսի կացութիւնը չէ բարւոքած տակաւին։

ՊԷՐԼԻՆ.— Վիլհէլմ Բ. ցուցակական հեռագիր մը ուղղեց Անգլիոյ Թագաւորին. Սէսիլ Ռ ոտի մահուան առթիւ։

ՀՌՈՄ.— Ձ.-ոյց կը պատի թէ ֆոն Պիւլով կոմսը եւ Պ. Բրինէտի տեսակցած ատեն միայն կարծիքներ յայտներ են ընդհանուր քաղաքականութեան վրայ, եւ թէ իրենց տեսակցութեան ատեն ոչ ալ է խնդիր չէ եղած Եռեակ Դաշնակցութեան վերանորոգման մասին։

ՇԸՄԻԶԸՐԻ ԻՒՆԻՎԵՐՍԷԼ

399, Բերա, Մեծ փողոց, 399
Ծանուցում 11/24 Մարտ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ
ԲԱՑԱՌԻԿ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌՈՒՄ

Մեծ զեղչ բոլոր ապրանքներուն վրայ, մանաւանդ ճերմակ շապիկներու, ռօպէթտէրի, կտաւներ ճերմակեղէնի, թաշկինակներու, Փօթէզի ապրանքներու վրայ
Վիէննական լէյէթտարի մոբիլեներու վրայ
5—12

1803

IMPERIAL

ԻՄՓԵՐԻԱԼ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ
Հաստատեալ ի Լոնտոն 1803ին

Դրամագլուխ	Ա. Ո.	3,900,000
Վճարուած հաստուցուած		16,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ ամէն տեսակ ապրանք, շէնք եւայլն
խիստ չափաւոր գիներով
Ընդ.-գործակալ Լիազօր գործակ. Թուրքիոյ
ՅՈՎՍԷՓ Տ. ԳԻՒԼՊԷՆԿԵԱՆ Ց. Բ. ԳԻՒԹԻՒՃԵԱՆ
Ղալաթիա, Ինայէթ Խան

ՍԱԿԱՐԱՆ

Երկուշաբթի, Լատինացւոց Զատկի երկրորդ օրը ըլլալուն համար, Սակարանը գոց պիտի մնայ։

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Միացեալ Սեր. Գ.	Օ. Ձ.	28	00 1/2
Ամէնէն բարձր գին	»	28	05
Ամէնէն վար գին	»	27	88 1/2
Թալէքլիք նոկի. գոց.	Ֆր.	112	87
Ամէնէն բարձր գին	»	112	12
Ամէնէն վար գին	»	112	50

ԲԱՑՈՒՄ 16 Մարտ

Օսմ. Միացեալ Սեր. Գ.	Օ. Ձ.	28	04
Թալէքլիք նոկի.	Ֆր.	112	75
Շիրքէթի Խայրիէ		26	75
[illegible]		—	—
[illegible]		14	15
Օ. Ս. Պանքա		—	—
Թաքտի Ժէնէրալ Օթօմ.		0	10
[illegible]		0	12
Օսմ. Աղաճ. Ընկ.		3	55
[illegible]		5	80
» [illegible]		1	55
» [illegible]		452	—
[illegible]		470	—
[illegible]		157	—

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն տեսիլ	Ղրշ.	110	15
» » » չէք	»	110	38
Փարիզ »	Ֆր.	23	68 3/4
» » » չէք	»	23	70
[illegible] չէք	Մարք	18	57
[illegible] չէք	[illegible]	21	73

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔ

20 Ֆրանքնոց	Ղրշ.	87	23
Անգլիական ոսկի	»	110	05
[illegible]	»	80	—
[illegible]	»	51	5
Մէճիտիէ արծաթ	»	108	02
[illegible]	»	160	—
[illegible]	Օ. Ձ.	8	58

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱՐԻԶ, 28 Մարտ

Ֆրանս. Թանք 3 %		100	70
» » 3 1/2 %		102	25
Օսմ. Թանս. Միաց. Գ. } բաց.	Ֆրնք.	25	97
} գոց.	»	26	—
» » » Բ.	»	51	70
» » » Գ.	»	28	05
Օսմ. Պանք. Գանքա	Ֆր.	563	—
Օսմանիէ	»	451	—
Թալէքլիք նոկի.	»	114	50
[illegible]	»	515	—
[illegible]	»	332	—
[illegible] Ռուսաց 4 %		497	—
[illegible]		1034	—
[illegible]	»	10	60
[illegible]	»	78	40
[illegible]	»	156	50
[illegible]		85	175
[illegible]		—	

Տր. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
396, Մեծ փողոց Բերա, 396
Տեսնել 4րդ երեսը
Փողոց կողմի մասնաճիւղ չունի

ԱՒԻԹԷՆ ՕԳՏՈՒԵՑԷՔ

Օ ԹԱԼՕՆ ՏՕՐ

ՓԱՐԻԶԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ
ԳԱՐԼՕ ԱՃԵՄԵԱՆ
ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ
ՎԵՐՋԻՆ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՎ ՎՐԱՅ
ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
Նաեւ կաղերու համար պատրաստուած
Կալաթա Վոյվոտա փողոց, Թիւ 103

ԲԵՐԱՅԻ

ԳԱՐԼԸՄԱՆ

ՎԱՃԱՌԱՏԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԼԻՔԻՏԱՍԻՈՆԸ
ՍԿՍԱՒ
Երկուշաբթի 11/24 Մարտ
809 7-12

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Կը խնդրուի մեր թղթակիցներէն եւ յօդուածագիրներէն որ իրենց ձեռագիրները թուղթին մէկ երեսին վրայ միայն գրեն, տպարանի աշխատութեանց դիւրութեան համար։

ԻԼԱՆ

Շիրքէթի Խայրիէ

25,000 քիլօ՝ բուղչէնը չէյթ, 16,000 քիլօ՝ բուղչէնը հնէա, 11,000 քիլօ՝ բուղչէնը ատէ։ Շիրքէթը Խայրիէի վարբըլուրընտա սարֆ օլունմագ իւզրէ, պալէտա գէճէր օլունան եալլըբըն մինասագասը ըճրա ամարտըն օն բէշինճի չարշէմպէ կիւնի ֆիաթը օլունաճաղընտան իթտայոմե թալիփ օլանլարըն թէքմինաթ աքչէսիլէ պէյաննամէ, հէր չարշէմպէ վէ ճումա իթթէսի կիւնլէրի սաաթ պէշտէն էքսիլթմէ գոմիսիոնինա Շիրքէթը մէքքիւրէ Իտարէ Մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։ 4—6

Ֆի 9 մարտ սէնէ 318

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՖ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ՆԻՒ-ԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ 1843ին
Պահեստի գումար ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 687 ՄԻԼԻՈՆ Ֆրանք
Ապահովագրական ամէն կարելի դրութիւնները կը գործադրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուգակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

Մուչուալ Լայֆի սակագինը եւ ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուիք։—Առատաձեռն պայմաններ, վճարմանց դիւրութիւնք։ Տեղեկութեանց համար դիմել առ Պ. Ֆ. ՀԷՐ, ընդհանուր գործակալ, Խնաճէթ խան, Վօյվօտա փողոց, Ղալաթիա, Կ. Պոլիս։ 579

BULGARIA
ՊՈՒԼԿԱՐԻԱ
ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՌԱՋԻՆ ԸՆԿ.
Հաստատուած Ռուսճուք
Դրամագլուխ եւ պահեստի գումար՝
6,000,000 Ֆրանք

Ապահովագրութիւն կարասիներու, կալուածներու, ապրանքներու եւայլն, Կ. Պոլսոյ եւ գաւառներուն մէջ, ազատ պայմաններով եւ նպաստաւոր սակագիններով։

Մասնաւոր ապահովագրութիւն ջաղացքներու եւ ճարտարագործներու համար։

Կեանքի եւ տղոց համար դրամագլուխ պատրաստելու ապահովագրութիւն։

Վնասուց անմիջական ու առատաձեռն հատուցումն։

Ընդհանուր գործակալութիւն, Կ. Պոլիս, Վօյվօտա փողոց, Գալաթիան խան։
Լիազօր վարիչ Ընդհ. Գործակալ
Տ. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ Ժ. Պ. ՔԱԶԱՐԵԹԹՕ
Ընկերութեան դրամատունը Գրէտի Լիոնէ

Կաթիլներու մէջ ամփոփուած
ՖՐԱՎԷԻ ԵՐԿԱԹ
FER BRAVAIS
Ամէնէն ազդեցիկ դեղն է

Անարիւնութիւնը, դեղնութիւնն ու տժգունութիւնը բուժելու։ Ոչ անախորժ համ ունի եւ ոչ ալ հոտ. աշխարհի բոլոր բժիշկները կը յանձնարարեն Ֆեր Պրավէն։

Պնդութիւն չի տար։ Ակռաները չի սեւցըներ։ Կարճ ժամանակի մէջ կուտայ Առողջութիւն, Կայտառութիւն, Ոյժ եւ Գեղեցկութիւն։ Կեղծերէն զգուշանալ։ Կը ծախուի թէ կաթիլի եւ թէ դեղահատի ձեւով ամէն դեղարաններու, մթերանոցներու մէջ։

Մթերանոց, Թիւ 130, Լաֆաէէթ փողոց, Բարիզ

ԹԻ ԿՐԷՇԱՄ
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. Ի ԼՈՆՏՈՆ
Ընկերութեան գոյութիւնը 31 դեկտ. 1898ին
162, 924, 140 ֆռանք
Տարեկան եկամուտ, ապահովագրութիւններ եւ այլն 31 դեկտեմբեր 1898ին
29, 765, 473 ֆռանք
Ընկերութեան հաստատութեան Թուականէն՝ այսինքն 1848էն ի վեր, ապահովագրեալներու եղած վճարմունք, կենսաթոշակ, եւն.
362, 858, 507 ֆռանք

1898 տարուան մէջ ընկերութիւնը 6619 թօլիսներ տուած է որոնք 58,680,000 ֆռանքի դրամագլուխ մը կը ներկայացնեն։

Աւելի տեղեկութեանց համար դիմել ընդհանուր գործակալներուն՝ Պ. Պ. ԽԵՕՐԸՐՍ ԵՒ ՈՐԴԻ, Պոլիս, Մէյտանճըք փողոց, Ալալէմճի խան։

Միջնորդներուն լաւ վարձատրութիւն պիտի ըլլայ։

Փոխ-գործակալութիւն, Ղալաթիա, Մէյմէնէթլի խան։

LE PHENIX AUTRICHIEN
ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ
Հիմնուած 1860ին Վիէննայի մէջ
ԿԱՅՍ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԸՆԴՀ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ	ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ
Դրամագլուխ եւ պահեստի գումար	Դրամագլուխ եւ պահեստի գումար
Մինչեւ 1898 դեկտ. 31, 31,008,000 Ֆր.	Մինչեւ 1898 դեկտ. 31, 17,000,000 Ֆր.

Սոյն Ընկերութիւնը լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնքեր, կարասիք ու ապրանք նաեւ անձեր, թէ Պոլսոյ եւ թէ գաւառներուն մէջ։ Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիոնէ։ Գրասենեակ, Պոլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 53—56։
Լիազօր Ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ
745



ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՔՐՈՂԱԿԱՆԸ
HUNYADI JANOS
Անմիջական, ապահով եւ դիւրին կերպով կ'ազդէ
Տիեզերահռչակ ճամբա
ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔԷՆ
Պահանջելու է ճշմարիտ անունը պարունակող պիտակով շիշեր
ANDREAS SAXLEHNER
Կը ծախուի դեղագործատուներուն եւ դեղավաճառներուն քով։ 387

ՋԵՐՄԱՄԻԶՈՒԹԵԱՆ
ԱՄԷՆԷՆ ԱԶԴՈՒ ԴԱՐՄԱՆԸ

Երիտասարդական զեղխութիւններէ առաջ եկած ջերմամիզութիւնն ու ամէն [illegible] հոսումները եթէ անխնամ ձգուին ով չի դարմանուին, սոսկալի հետեւանքներ կ'ունենան եւ մինչեւ իսկ որ [illegible] կը գրեն զմարդ. Թէ նոր [illegible] եւ թէ հինցած ՋԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆՆ անվրէպ կերպով ու հիմնապէս բուժելու համար ՍԱՆԹԱԼ ՍԱԼՕԼԷ ԷՄՄԻՐ անունով դեղ մը հնարուած է որ բնաւ ստամոքսը չխանգարելով կարճ ժամանակի մէջ կատարելապէս կ'անհետացնէ հիւանդութիւնը, առանց հետք մը ձգելու։

Ջերմամիզութեան համար թէեւ շատ մը դեղեր կան, բայց անոնք ստամոքսը խանգարելէ եւ միզանքն ու ամորձիքները ուռեցնելէ եւ հիւանդը յուսահատեցնելէ ուրիշ բանի չեն ծառայեր. մինչդեռ ՍԱՆԴԱԼ ՍԱԼՕԼԷ ԷՄՄԻՐ բոլորովին զերծ է այս անպատեհութիւններէն։ Հետեւաբար անոնք որ այս կարգի ծածուկ հիւանդութեանց ենթակայ են ու չեն փութար այս գիտական մեթոդով պատրաստուած դեղը գնել, պարապ տեղը ժամավաճառ կ'ըլլան եւ ուղղակի կը փճացնեն իրենց առողջութիւնը։

Սանդալ Սալօլէ էմմրին կը ծախուի մայրաքաղաքիս եւ գաւառներու մեծ դեղարաններն ու դեղի մթերանոցները։ Զգուշացէք անուններու նմանութենէն. ԷՄՄՐԻ անունը փնտռեցէք։

Կը ծախուի նէէ՛ի ճամիի բակը Բէազիտ պէյլի Սուլթան Համամ Մէզինքի, Լիսօս, Պօն-Էյիոնօ դեղի մթերանոցներն ու Պահճէ Գաբու Քիւչիւքեան դեղարանը։
789 20—52

ՔԻՒՆԱՐՏ CUNARD
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻ
[illegible] [illegible] Լիվէրբուլ [illegible]

Անուն	Թօնս	Անուանք	Թօն.
[illegible]	13900	[illegible]	[illegible]
[illegible]	13900	[illegible]	[illegible]
[illegible]	12952	[illegible]	[illegible]
[illegible]	12950	[illegible]	[illegible]
[illegible]	8845	[illegible]	[illegible]
[illegible]	8128	[illegible]	[illegible]
[illegible]	8120	[illegible]	[illegible]
[illegible]	[illegible]	[illegible]	2181
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]

[illegible] ԺՕԼԻ Ե ՊԷԿԷՐ
Joly et Beager
[illegible] խան, Թիւ 6, 7, 8, [illegible] 256

ՄՕՍ
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվէրբուլ, Մարսիլ, Մէլիթէյ [illegible] [illegible]

Անուանք	Թօնս	Անուանք	Թօն
[illegible]	3000	[illegible]	3501
[illegible]	3000	[illegible]	2405
[illegible]	3000	[illegible]	2256
[illegible]	3000	[illegible]	2251
[illegible]	3000	[illegible]	2000
[illegible]	3005	[illegible]	1500
[illegible]	2500	[illegible]	1509

Դիմել առ Թ. Վ. ՎԻԹԹԷԼ Ե ԸՆԿ.
[illegible] խան
[illegible] ՄՕՍ Ե ԸՆԿ.
194 31, [illegible] Լիվերբուլ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1852
Տ. Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ-ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ
396 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԷՕՂ. 396
(Տաճնի զառեվերաւած վրայի յարկը, եկեղ Զօրութենանց դէմը)
[illegible]
[illegible]
Տնօրէն —[illegible] 197

ՆԻՈՒ-ՀՈՄ
NEW HOME
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Բարիզի 1900ի արուեստահանդէսին ու 1894ի Անվերսի արուեստահանդէսին մէջ անմրցելի յաջողութիւն մը գտած են ամերիկեան Նիու-Հոմ կարի մեքենաները. որոնք թեթեւ, տոկուն ու արագ ըլլալնուն ամէն տան համար անհրաժեշտ են։ Նաեւ կը ծախուին ընտանիքներու եւ արհեստանոցներու համար պէտք եղած զուլպայի եւ ֆանէլայի ձեռքով ու ոտքով մեքենաներ։ Գասերը ու նորոգութիւնները ձրի են, թէ՛ կանխիկ եւ թէ ամսական վճարումներ կը կատարուին, մասնակի վճարումներով։



Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ ԱՄԱՏԷՕ ՍԱԼՎԱԹՈՐ
ԸՆԴՀ. ՄԹԵՐԱՆՈՑ —Պոլիս, Պահճէգաբու, Համիտիյէ Ճատտէսի Թիւ 7
ՄԱՍՆԱՃԻՒՂ.—Իզմիտ, Ռոտոսթօ, Աֆիոն-Գարահիսար, Սիլիվրի եւն. 578

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍՕՆ
[illegible]
[illegible]

Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս
[illegible]	1059	[illegible]	1437	[illegible]	1011	[illegible]	724	[illegible]	153
[illegible]	2607	[illegible]	3906	[illegible]	1695	[illegible]	2378	[illegible]	1112
[illegible]	1541	[illegible]	895	[illegible]	775	[illegible]	2709	[illegible]	1735
[illegible]	2877	[illegible]	4311	[illegible]	1531	[illegible]	3557	[illegible]	1187
[illegible]	1832	[illegible]	987	[illegible]	5720	[illegible]	1957	[illegible]	1208
[illegible]	1354	[illegible]	2588	[illegible]	3800	[illegible]	1735	[illegible]	1322
[illegible]	1973	[illegible]	1713	[illegible]	505	[illegible]	3412	[illegible]	1546
[illegible]	341	[illegible]	504	[illegible]	2554	[illegible]	1035	[illegible]	2327
[illegible]	4451	[illegible]	2464	[illegible]	5540	[illegible]	4100	[illegible]	1476
[illegible]	1671	[illegible]	1520	[illegible]	1980	[illegible]	4026	[illegible]	467
[illegible]	1237	[illegible]	1341	[illegible]	1058	[illegible]	1535	[illegible]	3429
[illegible]	1346	[illegible]	956	[illegible]	2307	[illegible]	1857	[illegible]	1914
[illegible]	1694	[illegible]	1533	[illegible]	1709	[illegible]	519	[illegible]	1388
[illegible]	2738	[illegible]	849	[illegible]	1058	[illegible]	3239	[illegible]	2395
[illegible]	1324	[illegible]	4532	[illegible]	3277	[illegible]	1853	[illegible]	1259
[illegible]	3697	[illegible]	3080	[illegible]	1848	[illegible]	1612	[illegible]	1203
[illegible]	4235	[illegible]	1248	[illegible]	[illegible]	[illegible]	1782		

Մօրնֆօ շոգենաւը, Նաւապետ Պօքսհօլ, ընդհանուր վաճառքով Հըլէն հոս հասած է։

Իպրօ շոգենաւը, Նաւապետ Ուտ, ընդհանուր վաճառքով Հըլէն հոս կը սպասուի ապրիլ 4ին։

Դիմել առ գործակալ Ս. ՀԷՅՏ ԻՆՏ ՊԷՏՋ
Թիւ 22-24 [illegible] խան, [illegible] 277

COMP RUSSE
NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE
ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Տարբեռան եկեղեցեկեղեցի
Եշ. 19 1 Օտեսա ժամը 4ին յետ միջօրէի։
Եշ. 20 2 Իզմիր, Փիրէ, Աղեքսանդրիա եւ 10ին միջօրէէն առաջ (Ճանապարհից Աղեքսանդրիա, Եաֆա-Յոփպէ, Պէյրութ եւ Պիրէ)։
Եշ. 21 3 Օտեսա ժամը 10ին միջօրէէն առաջ
Եշ. 21 3 Ինէպօլու, Սինոպ, Սամսոն, Օրտու, Կիրասոն, Տրապիզոն, Բաթում եւ Նովոռօսիյսք ժամը 1ին յետ միջօրէի։
Ո. շ. 22 4 Օտեսա ժամը 4ին յետ միջօրէի։ 55

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
[illegible]
Ն. ՊԱՔՔԷ ԵՒ ԸՆԿ.
[illegible]
Մարտ 31ին Անադոլի, Անտ. եղերքէն։
[illegible]
Ապրիլ 1ին Անադոլի, ուղ. Մարսիլիա։
[illegible]
[illegible] 245 ֆրանք. [illegible] 175 ֆրանք. [illegible]
[illegible] 515 Բ. [illegible]

ՖՐԵՏ. ԼԷՅԼԱՆՏ ԵՒ ԸՆԿ.
ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լիվէրբուլ եւ [illegible]

Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս
[illegible]	10500	[illegible]	8500
[illegible]	10500	[illegible]	2506
[illegible]	10500	[illegible]	[illegible]
[illegible]	9000	[illegible]	2500
[illegible]	9000	[illegible]	[illegible]
[illegible]	9000	[illegible]	2500
[illegible]	9000	[illegible]	2560
[illegible]	9000	[illegible]	2560
[illegible]	9000	[illegible]	[illegible]
[illegible]	8700	[illegible]	500
[illegible]	8700	[illegible]	[illegible]
[illegible]	8700	[illegible]	[illegible]
[illegible]	8500		

[illegible] 24 ժամ առաջ։
[illegible]
[illegible] Ղալաթիա, [illegible]
688

— 10 —

ՆԱՄԱԿԱՆԻ ԱՌ ԵՐԻՏԱՍԱՐԴՍ

ՆԱՄԱԿ Գ.

ՃԱՇԱԿ

Կենցաղամոլ չպիտի ըլլաք դուք, սիրելիդ իմ Պօղոս, ընտանիքի տէրն ու ձեր անձին յարգն ապահով երաշխաւոր մըն են այս մասին, թո՛ղ որ, եթէ նոյն իսկ այս ծանրակշիռ պատճառները չկենային՝ իբր երաշխիք ձեր ապագային դարձեալ պիտի կարծէի թէ դուք կենցաղամոլութեան դէմ ըստ բաւականին կը պատսպարուիք ձեր նուրբ ճաշակով ողջմտութեան այս փափկութիւնով։

Մեծապէս կը յարգեմ այն համեստ բարեմասնութիւնը՝ որ կը կոչուի ողջմտութիւն բայց անգիտակ չեմ նաեւ թէ զայն երիտասարդներուն յանձնարարել, կը նշանակէ փոթորիկներ յարուցանել ուղեղ։ Գլխաւոր միտքը՝ զոր ողջմտութիւնը կը պատճառէ, կ'ըսեն, ա՛յն է որ կ'ուծացնէ խանդավառութիւնները, կը ջնջէ գեղեցիկ թռիչները, կը սպաննէ բանաստեղծութիւնն ու մտքէն կը կորզէ անոր համեղ ու վաղվաղուկ հանդամանքը։ Ուրեմն առ այժմ պիտի շատանամ ձեզմէ խնդրելով որ գոնէ հետեւիք Պուալոյի խորհուրդին. «Զգուշացէք ողջմտութիւնը ծաղրելէ։»

Երիտասարդութեան ժամանակ, կը սիրուի մանաւանդ՝ ինչ որ փայլուն է. իսկ պարզ, ուղիղ, միաձեւ եղող բաներուն ճաշակն ապագային մէջ կը զարգանայ։ Ասկէ առաջ կուգայ այն արհամարհանքը՝ զոր կը ներշնչէ դատողութիւնը. ճշմարիտը սուտէն, բարին չարէն, լաւը յոռիէն, իրաւացին անիրաւէն, ճիշդը անճիշդէն որոշելու այն կարողութիւնը, զոր պարտէին ժառանգել բոլոր այն էակները՝ որոնց Աստուած բանականութիւն տուած է։

Եթէ, ձեր կեանքի ընթացքին սկզբնաւորութեան մէջ մտացի մարդ մը ըլլայիք, սիրելիդ իմ Պօղոս պիտի ունենայիք ողջմիտ կարծիք (sens commun), զոր Կէթէ սահմանած է մարդկութեան ոգի իսկ եթէ, մտքի ցնորումներուն ու թռիչքներուն մէջէն եղ, միեւ նոյն մարդը մնայիք, ողջմտութիւն (bon sens) պիտի ունենայիք։ Ահա երկու ածականներ, ողջ ու ողջամիտ, որոնք շատ պերճափայլ չեն, այնպէս չէ՞։ Ինչ որ ողջմտութեան կը վերաբերի՝ ռամկական է անշուշտ ինչ որ ողջամիտ կարծիքի կը պատկանի, ա՛լ աւելի ռամկական է։ Տարբեր գաղափարներ զարթուցանող տարբեր բառեր պէտք են յօժարեցնելու համար զանոնք տաղտկալի շատախօսներ են, ամէն բանի անընդունակ ու ողջամիտ կարծիքէ զուրկ, ու կը տենչան պերճանքի, [illegible] նորօրինակութեան։ Այս կամ այն միջոցով, կ'ուզեն խուժանին մէջէն դուրս ելլել, ու հետեւաբար ըլլալով հանդերձ՝ չեն ուզեր գտնուիլ զրկեալներուն համայնքին մէջ։

Սակայն ի՞նչ է թէ Վոլթէր ո՛չ երիտասարդները քաջալերած է ոչ ալ ծերերը. անոր համար ողջմտութիւնը կը նշանակէ անտաշ խելք, իրերու մասին տարրական ծանօթութիւն, վիճակ մը՝ որ գրեթէ մօտ է թանձրամտութեան։ Թէ՛ ինքը եւ թէ իր դարուն մարդիկը մտքին հրապոյրներուն, նրբամտութեան ու ծաղրասիրութեան մասին ունէին այնպիսի՛ կարծիք մը՝ որ պարտէր ձգտիլ ողջմտութիւնը նուաստացնելու. կամ թէն աւելի գեղեցիկ բաժին մը հանած էր այս միեւնոյն ողջմտութեան. անոր սահմանը պէտք պիտի ըլլայ ձգել այն օրը՝ ուր հասուն դատողութիւն ունենանք։ Ողջմտութիւնը, ըսած է, մարդկային մտքին ճիշդ միջին համեմատականն է համայն տիեզերքի մէջ։ Ողջմտութենէն վեր, սրամտութենէն աւելի բան մը կայ. հանճա՛րն է այն փորձառութեան բացառիկ բաժինը, մինչդեռ ստորեւ կը գտնուին տխմարութիւնը միջակութիւնն ու բարոյական այնքան ցաւագարութիւններ՝ որոնք կը կազմեն մարդկային տեսակին մէջ ստորնագոյն եղող բաներուն ողբալի [illegible]։

Ողջմտութիւնը, այնչափ անարգուած ըլլալով հանդերձ, կարեւոր տեղ մը գրաւած է մտքին վեհագոյն աստիճաններուն մէջ. կը միջամտէ ամէն տեղ՝ ուր կը տրամաբանուի ու ասոր կը պատկանի վերջին խօսքը։ Նոյն իսկ հանճարը, կարօտ է զայն ունենալու՝ իբր օժանդակ ու իբր հեցուկ։

Կը կարծեմ նաեւ —ու սա՛ր համար կը շեշտեմ—, թէ ողջմտութիւնն եթէ քիչ մը կը նպաստէ զմեզ փայլեցնելու, շատ կ'օգնէ մեզ առաջ որդելու եւ մանաւանդ զմեզ զսպելու։

Ողջմտութիւնը բարի վարքին ազդակներէն մէկն է. մեզ կը սատարէ որ տխմարութիւններ չընենք բնաւ։ Սրամտութիւնը՝ որ միշտ կը կարկաջէ ու գրեթէ չի խորհրդածեր, զուրկ է այս արժանիքէն։ Ուստի անկեղծօրէն խօսելով ուրեմն, սիրելիդ իմ Պօղոս, համամիտ եմ հետագայ խօսքին ըսողին. «Երբեք գոյութիւն չունեցան ո՛չ աւելի ազնիւ բարեկամներ ո՛չ ալ աւելի գիտուն իմաստասէրներ՝ քան բանավարութիւնն ու ողջմտութիւնը։»

Բայց որովհետեւ ողջմտութիւնը ձեր տարիքին յարմար առաքինութիւն մը չէ դեռ, կուգամ ձեզ առաջարկել, փորձառութեան լոյսերուն սպասելով հանդերձ, որ առ այժմ առնէք միայն անոր ծաղիկը, որ կը կոչուի կիրթ ճաշակ։

Ճաշակը, աշխարհիս մէջ ու աշխարհային բաներուն համար զօրաւոր նախապահեստ մըն է. [illegible] թէ փիզի գայլէս ինչ որ գէշ է՝ տգեղ է ու գիտէք որ ճաշակը կը վախնայ տգեղէն։

Ճաշակ բառը յեղյեղուած է արուեստներու եւ դպրութիւններու կամ գրագիտութեան մէջ. սակայն լիովին դիտուած չէ անոր դերը՝ զոր կը կատարէ բարքերու մէջ. Բնաւ ստոյգ չէ թէ ինչ ի՛նչ բաներ ճաշակին իրաւասութեան սահմանէն դուրս են, ճաշակը մեզ կարեւոր է արտադրելու ինչպէս նաեւ դատելու համար. նմանապէս կարեւոր է վարուելու եւ մեր կեանքը կանոնաւորելու համար։

Այնչա՛փ վստահութիւն ունիմ ճաշակին կարողութեան վրայ՝ որ եթէ իբր անկարելի ենթադրութիւն, կենցաղամոլ ըլլալու փորձութիւնն ունենաք օր մը, ու, անզօրութեան այդ ժամուն մէջ ձեր անձը պաշտպանելու համար, կորսուած ըլլաք ձեր նկարագիրն ու ձեր զգացումները, համոզուած եմ թէ ձեր ճաշակէն պիտի պաշտպանուիք։ Հազի՛ւ թէ անցնիք ծայրահեղութիւններուն ու տխմարութիւններուն պատուարէն անդին, պիտի համակուիք՝ եթէ կրնամ ըսել՝ հոգեկան սարսուռով մը։ Ճաշակի տէր եղող մարդը բնազդօրէն սոսկում կը զգայ գծուծ, ամօթալի ու տձեւ բաներէ, չի հաւանիր յաւէտ աղտեղել իր միտքը քան թէ իր մարմինը. հաւասարապէս կը խորշի թէ՛ ցեխէն թէ՛ կապիկներէն։

Ճաշակը չէ, որչափ որ ըսուած է, այնպիսի՛ բնածին յատկութիւն մը՝ զոր անհնար ըլլայ ստանալ. այլ դաստիարակութի՛ւնն ալ ճաշակ կ'ընծայէ՝ ինչպէս բնութիւնը։

Որովհետեւ իմացականութեան զուտ մէկ արդիւնքն է, կը կատարելագործուի մշակութիւնով, ուշադրութիւնով մեր ծանօթութիւններուն զարգացումով, գեղեցիկ, պատշաճ ու փափուկ եղող բաներուն միջավայրին մէջ ապրելու սովորութիւնով։ Հազուադէպ են այն յանկարծական գուշակումները՝ որոնց շնորհիւ կարող ենք ստուգապէս որոշել թէ ինչպիսի կարծիք պարտինք յայտնել կամ թէ ինչպիսի ընթացք պարտինք բռնել. անհամբերութիւնն ու յանձնապաստանութիւնը չեն համակերպիր զմեզ շրջապատող մարդերուն ու իրերուն ո՛չ փորձառութիւնը, ո՛չ ուսումնասիրութիւնը, ոչ ալ փրկարար ազդեցութիւնը։

(Շարունակելի)